Ազգ
Azg
23 ՄԱՐՏ 2013 ՇԱԲԱԹ 44(5127)
ISSN: 1829-1651

# Զենքի գործադրմամբ միջադեպ Ազգային ժողովի բակում

Երեկ դանակով զինված միջին կազմվածքով մի երիտասարդ կարողացել է մուտք գործել Ազգային ժողովի բակ: Մտնելիս անցագրային ծառայությունում իրեն ուղղված հարցին, թե ով է, ասել է, որ Քրիստոսն է, ձեռքին եղել է դանակ, ու չնայած անվտանգության աշխատակիցների զգուշացումներին՝ սպառնալով առաջ է խոյացել դեպի բակ: Այդ ժամանակ ԱԺ ճեպազրույցներն ավարտվել էին, եւ լրագրողների մի մասը հեռացած է եղել խորհրդարանից, սակայն դե-



ռեւ այնտեղ մնացած լրագրողների պատմածներով՝ ԱԺ անվտանգության աշխատակիցները նախազգուշական կրակոցից հետո ստիպված են եղել կրակել երիտասարդի ոտքին՝ վնասազերծելով նրան: «Պանորամա» կայքի լրագրողին այդ մասին ասել է պետական պահպանության ծառայության պետի տեղակալ **Սամվել Հովհաննիսյանը**: Երիտասարդին առաջին օգնություն ցուցաբերել է ԱԺ բուժծառայությունը, այնուհետեւ նրան տեղափոխել են թիվ 1 համալսարանական հիվանդանոց: Ավելի ուշ պարզվել է, որ զինված ներխուժած երիտասարդը Մասիս քաղաքի բնակիչ, 25-ամյա Վրեժ Գալստյանն է: Նրա ստացած հրազենային վերքը միջին ծանրության է, ազդրի հատվածում միջանցիկ վնասվածք:

Ազգային ժողովում քննչական գործողություններ է իրականացնում հատուկ քննչական ծառայությունը (որից լրագրողները եզրակացրել են, որ ներխուժողը հավանաբար պաշտոնյա է եղել): Հարուցվել է քրեական գործ: Ավելի ուշ գլխավոր դատախազի մամլո քարտուղար **Սոնա Տրուզյանի** տեղեկացմամբ՝ դեպքը տեղի է ունեցել ժամը 14:50-ի սահմաններում. չենթարկվելով ԱԺ անվտանգության ծառայության աշխատակիցների օրինական պահանջներին, քաղաքացին մուտք է գործել ԱԺ տարածք, եւ կրկին անտեսելով անվտանգության ծառայության աշխատակիցների պահանջները, դանակի գործադրման սպառնալիքով փորձել է մտնել վարչական շենք, ավելին՝ փորձել է դանակով հարվածել ծառայության աշխատակիցներից մեկին:

Անձն իր պաշտոնի գործողությունները չի դադարեցրել նաեւ նախազգուշական կրակոցներից հետո, ուստի եւ վնասազերծվել է հրազենի գործադրմամբ: Նրան մարմնական վնասվածք է պատճառվել:

Ահազանգը ստանալուն պես դեպքի վայր է մեկնել ՀՔԾ քննչական խումբը, կատարվել է դեպքի վայրի տեղազննություն, առգրավվել են նաեւ ԱԺ տվյալ տարածքը նկարահանող սարքերը, եւ տեսաերիզը, համապատասխան զննությունից հետո նույնպես կներկայացվի հանրությանը:

Ըստ տարածված տեղեկությունների, Վրեժ Գալստյանը նախկինում երկու անգամ դատապարտված է:

Մ. Խ.

# Թեսսա Հոֆման. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար պետք է դիմել միջազգային դատարան



ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցը պայքարի ավարտը չէ, ամեն ինչ սկսվելու է հենց այստեղից», վստահեցնում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանը** «Հայոց ցեղասպանություն.մարտահրավերներ հարյուրամյակի նախաշեմին» վերնագրով երեկ Երեւանի «Անի Պլազա» հյուրանոցում սկսված միջազգային եռօրյա գիտաժողովի ժամանակ:

Դեմոյանը, որ նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղարն է, ասաց, որ գիտաժողովի շնորհիվ մեկ հստակ խնդիր պետք է լուծվի՝ Հայոց ցեղասպանության հարյուրամյակին նվիրված միջոցառումներ կազմակերպել՝ միջազգային հանրությանը հայ ժողովրդի պայքարի ոգին ցույց տալու համար: «Ամբողջ աշխարհն այդ միջոցառումների շնորհիվ պետք է հասկանա, որ հարյուրամյակը պայքարի ավարտը չէ: Թող հույս չունենան, որ 2015թ. հայ ժողովրդի պայքարը կավարտվի: Հարյուրամյակին նվիրված միջոցառումներով մենք պետք է ցույց տանք, որ պայքարելու ենք մինչեւ վերջ, եւ ես վստահ եմ, որ մենք դա կանենք»:

Տես էջ 2

# Այսօր՝ «Մոլորակի ժամը»

Հայաստանում եւս մեկ անգամ կանցկացվի «Մոլորակի ժամը» համաշխարհային ակցիան, որի նպատակն է հասարակությանը, բիզնես աշխարհին, համայնքներին եւ այլ շահագրգիռ կողմերի միավորել լույսերը մեկ ժամով անջատելու գաղափարի շուրջը հանուն մեր մոլորակի կենսական պայմանների եւ ռեսուրսների պահպանման: Հայաստանը ակցիային մասնակցում է արդեն հինգերորդ անգամ: Մարտի 23-ին՝ այսօր, ժ. 20:30-ից 21:30-ը Երեւանում մեկ ժամով կանջատվի մայրաքաղաքի խորհրդանիշ շենքերի եւ օբյեկտների արտաքին լուսավորությունը, նաեւ՝ փողոցներինը:

«Մոլորակի ժամ» համաշխարհային ակցիան առաջին անգամ մեկնարկել է 2007-ին Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում, որտեղ 2 միլիոն մարդ անջատել էին իրենց լույսերը՝ նպատակ ունենալով միավորել մարդկության ջանքերը կլիմայի փոփոխության դեմ մղվող պայքարում: Մասնակից քաղաքների թիվը տարեցտարի աճում է. 2012-ին ակցիային մասնակցել է 37 մայրաքաղաք: Այս տարի մասնակցելու է աշխարհի ավելի քան 150 պետություն:

# Րաֆֆին առաջարկներ է ուղարկել Սերժին

Երեկ Ազատության հրապարակ, Րաֆֆի Հովհաննիսյանին էր այցելել Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը տիկնոջ հետ: Երեկ Ազատության հրապարակում էին նաեւ Րաֆֆի Հովհաննիսյանի ծնողները՝ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանն ու Վարդիթեր Կոճոլոզյանը: Ի դեպ, **Ռիչարդ Հովհաննիսյանն** արդեն երեկոյան ելույթ ունեցավ Րաֆֆու կողմնակիցների հանրահավաքում. «Շատ ուրախ եմ, որ ձեր միջոցով ցնցեցիք ոչ միայն Հայաստանը, այլեւ ամբողջ սփյուռքը, որ նոր հույս ստացավ, նոր հեռանկարներ սկսեց մտածել, թե իր դերն ինչ կարող է լինել այս երկրի բարգավաճման գործում: Ես միայն կողմնակից եմ եղել երկխոսության եւ փոխադարձ զիջման: Դա շատերի համար կարող է հաճելի չլինել, բայց ես կուզեմ դուրս գալ այս վիճակից», ասաց նա:

Իսկ **Րաֆֆի Հովհաննիսյանը** խոսել է նախագահ Սարգսյանին ուղարկելիք նամակում եղած առաջարկների մասին. նախ՝ նախագահական ընտրությունների, ապա՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացում այս տարվա ընթացքում, մինչ այդ ընտրական օրենսգրքում իրականացնելով փոփոխություններ, վերացնելով մեծամասնական կարգը եւ թողնելով բացառապես համամասնական կարգը: Րաֆֆին նաեւ առաջարկում է առնվազն 5 մարզպետի ազատում աշխատանքից, որոնց փոխարեն նշանակվելու են Րաֆֆու ներկայացրած մարդիկ: Ընտրակեղծարար քաղաքապետները եւ գյուղապետները պետք է ազատվեն աշխատանքից, բոլոր ընտրակեղծարարները քրեական պատասխանատվության ենթարկվեն: Գլխավոր դատախազության, հարկային եւ մաքսային ծառայությունների, արտգործնախարարության, կրթության եւ գիտության նախարարության, վերստուգիչ պալատի, արդարադատության նախարարության, հակակոռուպցիոն հանձնաժողովի ղեկավարներ Րաֆֆի Հովհաննիսյանն առաջարկում է նշանակել իր ներկայացրած մարդկանց:

Այս առաջարկներով նամակ-պայմանագիրը, որը ենթակա է կողմերի ստորագրմանը, Րաֆֆի Հովհաննիսյանը դրել է ծրարի մեջ՝ ուղարկելու:

Մ. Խ.

# Աշխարհը ողջունում է զենքը վայր դնելու Օջալանի կոչը

## *Միանշանակ չէ թուրքական եւ քրդական շրջանակների մոտեցումը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Նովրուզը քրդերի, ալավիների եւ հատկապես պարսիկների համար ամանորյա տոն է, այդ իմաստն էլ ունի պարսկերենում: Դա նշվում է մարտի 21-ին: Այս տարվա տոնակատարությունները, սակայն, ունեին առանձնահատկություն: Դա PKK-ի առաջնորդ Աբդուլլա Օջալանի «զենքը վայր դնելու եւ Թուրքիայի սահմաններից հեռանալու» ուղերձն էր քուրդ մարտիկներին եւ այդ ուղերձը հնչեց հենց Դիարբեքիրում՝ Հյուսիսային Քուրդիստանի «մայրաքաղաքում»:

Նախորդ համարում անդրադարձել էինք Օջալանի ուղերձի հրապարակմանը Դիարբեքիրի գլխավոր հրապարակում, որտեղ հավաքված հարյուրհազարավոր քրդեր Քուրդիստանի եւ PKK-ի դրոշների ու քրդական այս կառույցի հիմնի ներքո Օջալանի պատկերող պաստառներով, ինչպես նաեւ ազատության պահանջներով Նովրուզի տոնակատարություններին քաղաքական հանրահավաքի բնույթ էին հաղորդել:

Թերեւս դա է պատճառը, որ Օջալանի ուղերձի հետ լայն արձագանք էր գտել նաեւ հանրահավաքի վերածված տոնակատարությունը, երկու դեպքում էլ՝ միջազգային: Արձագանքները շարունակվում են: Հարկ է նշել, որ այդ ուղերձի տեքստը ինչպես միջազգային, այնպես էլ թուրքական լրատվամիջոցներին հասել է կիսապաշտոնական «Անադոլու» գործակալության միջոցով, որն էլ խմբագրել է, ենթարկելով մասնակի գրաքննության:

Քանի որ արդեն անդրադարձել ենք Օջալանի ուղերձին միջազգային լրատվամիջոցների արձագանքներին, ուստի հարկ ենք համարում հակիրճ ներկայացնել համանուն կառույցների, թուրքական եւ քրդական քաղաքական շրջանակների գնահատականները:

Թուրքական էլեկտրոնային եւ տպագիր մամուլի, մասնավորապես CNN-turk-ի տվյալներով, Եվրոպական խորհուրդն ու նրա խորհրդարանական վեհաժողովը գոհունակությամբ է ընդունել Օջալանի ուղերձը եւ հույս է հայտնել, որ ուղերձով սկզբնավորված գործընթացը կհանգեցնի մնայուն խաղաղության:

Եվրոմիությունը ողջունել է Օջալանի՝ զենքը վայր դնելու եւ երկրի սահմաններից դուրս գալու PKK-ի մարտիկներին հասցեագրած կոչը եւ աջակցություն ցույց տալու, ֆինանսականը ներառյալ պատրաստակամություն է հայտնել հաշտեցման գործընթացին: Եվրոպական այս կառույցին է միացել Եվրոխորհրդարանը:

Ինչ վերաբերում է Մ. Նահանգներին, ապա նրա մոտեցումն էլ արտահայտել է պետքարտուղարության խոսնակ Վիկտորիա Նյուլանդը. «Ուղերձը դրական քայլ է Թուրքիայում 30 տարվա վաղեմություն ունեցող բռնությանը վերջ տալու համար: Մենք ողջունում ենք թուրքական կառավարության եւ շահագրգիռ բոլոր կողմերի խաղաղ կարգավորման ջանքերը: Վաշինգտոնը կշարունակի աջակցել Թուրքիայի ժողովրդին խնդրի (քրդական հարցի) խաղաղ կարգավորմանը միտված ջանքերում»:

Տես էջ 5

# Ջրի համաշխարհային օրը տոնվում է նաեւ Երեւանում

ՄԱԿ-ի որոշմամբ մարտի 22-ը նշվում է որպես ջրի համաշխարհային օր:

Ջրային ռեսուրսների բազմակողմանիությունը ներկայացնելու նպատակով ամեն տարի Հայաստանում ջրի օրվան նվիրված տարատեսակ միջոցառումներ են անցկացվում, որոնց նպատակն է կարեւորել ջրի նշանակությունը:

Երեկ տոնի առթիվ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի երկրաբանական թանգարանում կազմակերպվել էր «Ջուրը մեր կյանքում» խորագիրը կրող միջոցառում, որի շրջանակում բարձրաձայնվեցին Հայաստանում ջրային ռեսուրսների օգտագործման եւ պահպանման հիմնախնդիրներն ու հեռանկարները:




Միջոցառումն անմասն չմնաց մշակութային կատարումներից, եւ ելույթներն ընդմիջվեցին պարային եւ երաժշտական համարներով:

«**Ազգը**» զրուցեց բնապահպանության նախարարության «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ **Հարություն Երեմյանի** հետ. «Այսօր երկրագնդի բնակչության գրեթե կեսը չունի խմելու ջրի ստանդարտներին համապատասխանող ջուր, եւ բոլորս պետք է հոգատար լինենք ջրի նկատմամբ, քանի որ ե՛ւ բենզինը, ե՛ւ էներգիան ունեն այլընտրանք, սակայն գիտությունը դեռ այդքան չի զարգացել, որ ունենանք ջրի այլընտրանք: Չենք էլ կարող ասել, արդյոք հետագայում կլինի՞ ջրի այլընտրանք, թե՞ ոչ: Յուրաքանչյուրս պետք է հոգատար լինենք ջրի հանդեպ, որպեսզի հետո մեր սերունդները կարողանան մաքուր ջուր խմել եւ առողջ մեծանալ: Ցավոք պետք է նշեմ, որ յուրաքանչյուր 20 վայրկյանում ջրի սակավության պատճառով մի երեխա է մահանում»:

Միջոցառման կազմակերպիչ **Գայանե Գրիգորյանը**, որը ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի երկրաբանական թանգարանի վարիչն է, «**Ազգին**» տեղեկացրեց, որ թանգարանում նշում են բոլոր բնապահպանական տոները: Անդրադառնալով ջրի միջազգային տոնին, ասաց, որ դարձել է ավանդույթ, ամեն տարի նշում են. «Օրվա նպատակն է, վեր հանել այն բոլոր խնդիրները, որոնք առաջացել են եւ կան Երկիր մոլորակի վրա: Այժմ գոյություն ունի քաղցրահամ ջրի պակաս եւ անհրաժեշտ է չաղտոտել այն աղբյուրները, մակերեւութային հոսող ջրերը: Եթե չլինի ջուր, չի լինի նաեւ կյանք: Յուրաքանչյուրս պետք է մտածենք այս կենարար հեղուկի պահպանման մասին եւ նմանատիպ միջոցառումների միջոցով բարձրաձայնենք առկա խնդիրները»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Թեսսա Հոֆման. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար պետք է դիմել միջազգային դատարան

*1-ին էջից*

Դեմոյանը վստահ է, որ այս գիտաժողովը հնարավորություն կընձեռի նաեւ հանգամանալի քննարկելու թուրքական ժխտողականության դեմ առավել արդյունավետ հակազդեցության մեխանիզմների ու եղանակների մշակումը: Գերմանիայի Բոխում համալսարանի դասախոս, նույն համալսարանին կից Սփյուռքի եւ ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, դոկտոր **Միհրան Դաբաղի** գնահատմամբ՝ այժմ պետք է կենտրոնանալ ոչ թե ընդհանրական մոտեցմամբ Հայոց ցեղասպանության ճանաչման, միջազգայնացման, այլ՝ մանրամասն ուսումնասիրություններով համամարդկային հիշողության մեջ ամրագրելու վրա: Դաբաղն առաջարկում է ամրագրել համամարդկային հիշողության մեջ Հայոց ցեղասպանության դառը փաստը՝ հետագա նմանօրինակ ոճրագործությունները կանխելու համար: Նա մտահոգված է, որ 2014-ին Եվրոպայում ստեղծվելիք Առաջին աշխարհամարտի «Հիշողության թանգարանում» անտեսված է Հայոց ցեղասպանությունը, եւ հիմնական շեշտը դրվելու է 1917-ի Ռուսաստանի հեղափոխության հետեւանքների վրա: «Հիշողության ամրագրման քաղաքականությունը պետք է վարվի միջազգային ճանաչման գործընթացին զուգահեռ», ասաց Դաբաղը՝ հավելելով, որ կարեւորը ոչ թե զուտ ցեղասպանության ճանաչումն է, այլ այն, թե ինչ հետեւանքներ կունենա:

Գերմանացի ցեղասպանագետ **Թեսսա Հոֆմանն** էլ համոզված է, որ Հայաստանը պետք է վավերացնի Հռոմի ստատուտը, որպեսզի Հայոց ցեղասպանության հարցը բարձրացնի միջազգային դատարաններում:

«Հայաստանի Հանրապետության խնդիրն է Հայոց ցեղասպանության իրականության հաստատման հարցով դիմել միջազգային դատական ատյաններ: Եվ եթե ցեղասպանության իսկական իրականացնողները կենսաբանորեն արդեն չկան, հարցը վերաբերում է նրանց իրավահաջորդներին եւ թուրքական պետականությանը, եւ այդ դեպքում հնարավոր է, որ ընդունվի փաստացի հետադարձ ուժ ունեցող վճիռ: Իմ կարծիքով, երբ ՀՀ Սահմանադրական դատարանը մերժեց Հռոմի ստատուտի հաստատումը, փակուղային դարձրեց միջազգային դատարան դիմելու գործընթացը: Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը կախված է ոչ միայն քաղաքական, այլ նաեւ դատական գործընթացների հետ»:

Թեսսա Հոֆմանն այս համատեքստում շեշտում է, որ երբ հարց է ծագում Հայոց ցեղասպանության մասին, թուրքական իշխանությունները հայտարարում են, որ ներկայիս Թուրքիայի Հանրապետությունը ոչ մի կապ չունի Օսմանյան կայսրության հետ, մինչդեռ քաղաքականության մեջ, հատկապես իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը, Էրդողանի կառավարությունն ու հենց Էրդողանը բացահայտ նեոօսմանական քաղաքականություն են վարում եւ իրենց համարում կայսրության իրավահաջորդներ»:

«Կալիֆոռնիա կուրիեր» թերթի գլխավոր խմբագիր **Հարութ Սասունյանի** մեկնաբանությամբ՝ Թուրքիան, նկատի ունենալով, որ հայերը մեծ պատրաստություն են տեսնում 100-ամյա տարելիցին ընդառաջ, որոշակի գործընթացներ կկազմակերպի մինչեւ ապրիլի 24-25-ը, որպեսզի միջազգային հանրության աչքի առաջ ազդեցություն ունենա: «Թուրքերը կհայտարարեն, որ սփյուռքում ապրող հայերը կարող են վերադառնալ եւ վերահաստատվել իրենց նախնիների տանը եւ ստանալ թուրքական քաղաքացիություն: Դա պետք է անընդունելի լինի հայության համար, որովհետեւ մենք չենք ուզում թուրքական կառավարության լծի տակ ապրել եւ մեր զավակները ծառայեն թուրքական բանակում: Վստահ եմ, որ թուրքական այս նախաձեռնությունը կարող է ապակողմնորոշել միջազգային հանրությանը, ցույց տալու, թե իբր թուրքական շրջանակները բարյացակամ են հայերի հանդեպ եւ ավելի հանդուրժողական: Սակայն մեր հասարակությունը պետք է հասկանա, որ այս ամենը խաբեբայական քայլեր են: Ես առավել մտահոգված եմ մեր ժողովրդի համար, որ քաղաքականապես հասուն չէ, քաղաքական հարցերում միամիտ է եւ դյուրահավատ: Որոշ հայեր պետք է ուզենան առաջնահերթություն տալ բանակցություններին՝ կարծելով, որ կկարողանան համոզել թուրք հասարակությանը: Այս բոլորը երեխայական միամտություններ են, հայը իրավունք չունի նման քայլի գնալու Թուրքիայի հետ եւ զոհ գնալու: Մենք պետք է շահամիտ լինենք ու միասնական եւ խորհրդակցենք՝ պետությունն ու սփյուռքը, կուսակցությունները, որպեսզի միասնական դիրք ունենանք: Ժամանակը եկել է, որ պահանջենք արդարություն, որը պետք է ներառի բոլոր այլ պահանջները՝ անձնականից մինչեւ նյութական եւ հողային: Հատուցման պահանջ ասելով մենք միայն դա պետք է նկատի ունենանք»:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Հայաստանի դեսպան Լեւոն Արոնյանը

**Գերմանական «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը» մարտի 19-ին անդրադարձել է Լոնդոնում ընթացող շախմատի աշխարհի առաջնության հավակնորդների մրցաշարին: «Դեսպանը՝ շախմատի խաղատախտակի առջեւ» վերնագրյալ հոդվածի հեղինակը Շտեֆան Լյոֆֆլերն է: Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքից նրա գրած հոդվածի նախաբանում կարդում ենք. «Շախմատի չեմպիոնության համար մրցաշարն ընթանում է Լոնդոնում, քանի որ հայերն Ադրբեջանում ապահով չեն զգում իրենց: Լեւոն Արոնյանն անկաշկանդ զրուցում է ադրբեջանցի գործարարների հետ: Վեճի մեջ մտած երկու հարեւանները մերձենում են»: Այս «ժլատ» բառերով նախաբանն, իհարկե, «բացվում է» հոդվածն ամբողջությամբ ընթերցելիս, թեեւ որոշ եզրակացություններ այդուհանդերձ «ենթադրական» տպավորություն են թողնում: Հոդվածի ընդարձակ տարբերակին անդրադառնում ենք ստորեւ՝ համառոտած:**



**Հավակնորդների մրցաշարը չսկսվեց բացման կարծր հանդիսությամբ: Ոչ էլ առաջին թույլ պայքարով, որտեղ որեւէ մեկը չէր ուզում ռիսկի դիմել, եւ բոլոր խաղերն ավարտվեցին ոչ-ոքի արդյունքով: Իրականում ամեն ինչ սկսվեց դրանից հետո, խնջույքի ժամանակ, որ հրավիրել էր ադրբեջանական «Սոքար» նավթային ընկերությունը: Վերջինս միակ պաշտոնական ներկայացուցչությունն է, որ շախմատի համաշխարհային մրցաշարին դրամ է հատկացնում: Նախապես Բաքվում պիտի կայանար մրցաշարը, բայց ֆավորիտներից մեկը՝ հայ Լեւոն Արոնյանը, Ադրբեջանում իրեն ապահով չէր զգա, այդուհանդերձ Լոնդոն տեղափոխված մրցաշարը չխանգարեց, որ «Սոքարը» հանձնառությունը կատարի: Չէ՞ որ Ադրբեջանի թիվ մեկ շախմատիստ Թեյմուր Ռաջաբովին, որը 9 տարի արդեն անձնապես հովանավորվում է պետական ընկերության կողմից, արտոնություն է տրվել մասնակցելու մրցաշարին: 8 շախմատիստները հյուրանոցի իրենց համարներից փողոց էլ չպիտի անցնեին հարեւանությամբ գտնվող շենքում խնջույքի մասնակցելու համար: Միակը, որ վերջին պարտիայից հանգստանալու եւ հաջորդին նախապատրաստվելու արանքում ճեղքել էր կարգուկանոնը, Արոնյանն էր: Երեկոն բեռլինաբնակ աշխարհաքաղաքացի Լեւոնի սրտով էր՝ ջազ, կովկասյան ճաշատեսակներ՝ գառան միս, սմբուկ, բրնձով փլավ, փախլավա: Արոնյանն անկաշկանդ զրուցում էր բոլոր հյուրերի հետ: Ադրբեջանցի գործարարների մեջ նա վերջին հաշվով Հայաստանի մի դեսպան էր: Շախմատը վեճի մեջ մտած երկու հարեւան երկրներում սիրված է, միջազգային հարթակներում նրանց լավագույն շախմատիստները հաճախ են հանդիպում, բայց ոչ երբեք՝ մեկը մյուսի հայրենիքում: Շախմատային վերջին 4 օլիմպիադաներից երեքում Հայաստանը հաղթել է: 2016-ին կարեւորագույն թիմային մրցաշարը Բաքվում է կայանալու: Քայլ առ քայլ Հայաստանի մասնակցությունը պիտի որ իրականանա: Կուլիսների հետեւում հրավերներ կձեւակերպվեն, այցը նախատեսող պայմանների շուրջը կբանակցեն: Նշանակություն կունենար, եթե Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահը, որ ինքը հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանն է, Բաքու ուղեւորվեր:**

**Ուշ երեկոյան հյուրերին միացավ նաեւ Ռաջաբովը: Արոնյանից ու Ռաջաբովից այս փոփոխությունը վրեժ չի լուծում: Նրանք երկուսն էլ հաջորդ օրը հաղթանակով ավարտեցին իրենց պարտիաները, իսկ հետագա մրցամարտում ունեցած հաղթանակով Արոնյանն առաջատար է, գրում է գերմանական ««Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգ» օրաթերթը:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Սկզբնաղբյուր նշելը պարտադիր է

**Հարգարժան տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Ղարիբյան:**

**Արտագաղթին նվիրված եւ «Ազգ»-ի երեկվա համարում լույս տեսած Ձեր վերլուծականում Լիսվայի բնակչությունը նշելով 2 մլն-ից քիչ ավելի՝ չեք նշել սկզբնաղբյուր: Ըստ ԱՄՆ-ում 1868 թ. լույս տեսնող «Համաշխարհային փաստեր, 2012» տեղեկատուի, Լիսվայի բնակչությունը 3.535.547 մարդ է:**

**Ռուսաստանի Դաշնությունում կյանքի միջին տեւողությունը 39 տարի ներկայացնելը նույնպես առանց սկզբնաղբյուրը նշելու է: Հիշատակված տեղեկատուի ՌԴ-ին նվիրված թվերում կանանց միջին տարիքը 60 է, տղամարդկանցը՝ 73 տարի:**

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ
Փաստալրագրող

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Խորհրդարանականները՝ Երեւանի ավագանու ընտրությունների մասին

Դեռ Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավին էլ չենք մոտեցել, սակայն քաղաքական ուժերի նյարդային պահվածքն արդեն վկայում է, որ պայքարը թեժ է լինելու: Երեկ նյարդերի լարումը զգացվեց նաեւ ԱԺ ճեպազրույցներում, որտեղ ավագանու ընտրությունների վերաբերյալ դիրքորոշումները, կարելի է ասել, բավական սուր էին:

Ամենից կոշտը ԲՀԿ-ն էր, որի ներկայացուցիչներ **Վարդան Օսկանյանն** ու **Նաիրա Զոհրաբյանի** տեսակետներից պարզ դարձավ, որ ԲՀԿ-ն բավական վճռական է տրամադրված Երեւանը գրավելու առումով: Հատկապես մեկ օր առաջ ՀՀԿ մամուլի խոսնակ **Էդուարդ Շարմազանովի** այն տեսակետին, թե ՀՀԿ-ն ավագանու առաջին քաղաքական ուժը լինելու դիրքը չի զիջելու ոչ մեկին, հետեւաբար Երեւանն էլ ոչ մեկին չեն զիջի, հակադարձեց Ն. Զոհրաբյանը՝ նշելով, թե Երեւանը որեւէ քաղաքական ուժի գրպանում չէ, եւ Երեւանը չզիջելու կամ ավագանու ընտրությունները զբաղեցնելու մասին հայտարարությունները մեծամտություն են, դրանք փակուղի են տանում: Նա կոչ արեց այդպիսի հայտարարություններ անողներին հաշվի նստել Հայաստանի քաղաքացիների քվեի հետ, իսկ ՀՀԿ-ԲՀԿ՝ սոցիալական ցանցերով եւ երիտթեւերի միջեւ սկսված փոխհրաձգության առիթով նշեց, որ իրենք միայն պատասխանում են եւ ոչ թե նախահարձակ են: Ու խոստացավ, որ ԲՀԿ-ի հանդեպ ոչ կոռեկտ ձեւակերպումները, խեղաթյուրումները համարժեք պատասխան են ստանալու:

Իսկ ԲՀԿ ցուցակը ղեկավարող Վարդան Օսկանյանը, ի պատասխան մի հարցի, ասաց, որ եթե ցուցակի առաջին համարն է, ապա հավակնում է Երեւանի քաղաքապետ լինելու: Նա խոսեց քաղաքական հարթությունում չորս զուգահեռ քաղաքական իրադարձությունների մասին՝ նոր կառավարության ձեւավորումը (որպես ժողովրդի կողմից փոփոխությունների պահանջարկի հանդեպ վերաբերմունք), Ազատության հրապարակի (որտեղ տեղի ունեցողն ինչ- որ ձեւով պետք է հանգուցալուծվի), խորհրդարանի նոր օրակարգի ձեւավորման (մեծամասնական ընտրակարգի վերացում, ԸՕ-ի փոփոխություն եւ այլն) եւ Երեւանի ավագանու ընտրություններ: Դրանք, ըստ Օսկանյանի, բոլորը զուգահեռ եւ իրար լրացնող գործընթացներ են: ԲՀԿ-ն պատրաստ է հաղթելու դեպքում Երեւանն առավել արդյունավետ կառավարել, վերացնել բյուրոկրատական քաշքշուկները եւ այլն: Հետագայում էլ հնարավոր է, որ ավագանիում առանձին ուժերի հետ կոալիցիա կազմեն՝ հակակշիռ ստեղծելով քաղաքական համակարգում:

Ի դեպ, պատասխանելով լրագրողների հարցին՝ Վ. Օսկանյանը կասկածի տակ դրեց նախագահական ընտրությունների արդյունքները, քանի որ դրանք, ըստ նրա, անցել են լուրջ խախտումներով: Սերժ Սարգսյանի երդմնակալությանը մասնակցելու հարցը ԲՀԿ-ում դեռ չեն քննարկել:

ՀՅԴ-ից ճեպազրույցների ներկայացած **Աղվան Վարդանյանը** ավագանու ընտրությունները քաղաքական եւ քաղաքն արդյունավետ կառավարելու պայքար համարեց միաժամանակ: Նա հույսով էր, այս ընտրություններին հասարակությունը կտեսնի ՀՅԴ դեմքը, որ ցույց տվի, որ խորհրդարանական ընտրությունների քվեները ՀՅԴ կշռին եւ ազդեցությանը համապատասխան չեն:Նա նշեց, որ քաղաքապետարանի աշխատակիցների 95 տոկոսը հանրապետական է, ու անգամ նրանք չեն կարող ասել, որ Տարոն Մարգարյանն ամենալավ քաղաքապետն է: ՀՅԴ-ի համար անընդունելի է նաեւ, որ արդեն սկսել են գործի դնել վարչական ռեսուրս, ֆինանսի պտույտ եւ թաղային հեղինակություններին: Իսկ ընտրությունների արդյունքը կախված է հասարակության ակտիվությունից, ինչն էլ կարող է փոփոխությունների հիմք դառնալ: Նա չբացառեց նոր ավագանիում կոալիցիա կազմելու տարբերակը:

Րաֆֆի Հովհաննիսյանի մասով էլ ասաց, թե երկխոսության դռները դեռ փակված չեն՝ հայտնի է, որ Րաֆֆին առաջարկներ է ներկայացնելու իշխանությանը, ու ամեն ինչ կախված է նրանից, թե նորից բեւեռային մոտեցումներ կլինե՞ն: Բայց որ նախագահական ընտրություններից հետո քաղաքացիական ակտիվությունն ու հասարակական էներգետիկան փոփոխություններ են բերելու՝ Ա. Վարդանյանը համոզված էր:

Ապագա ավագանիում կոալիցիայի հնարավորությունը չբացառեց «Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Ռուբեն Հակոբյանը**, եթե, իհարկե, չկրկնվի խորհրդարանական ընտրությունների նախօրեին քաղաքական ուժերի վարքը, ու այս անգամ նրանք ազնվորեն պայքարեն ընտրակեղծիքների դեմ. քանի որ ազնիվ ընտրություններ ասում են, գործողություններում, սակայն, ազնվությունը բացակայում է: Նա եւս ավագանու ընտրությունները քաղաքական իրադարձություն նկատեց եւ վստահ էր, որ «Ժառանգությունը» կամ «Բարեւ, Երեւանը» բարձր քվեներ է ստանալու այդ ընտրություններին: Իսկ ՀՀԿ-ից հնչող տեսակետները, թե մնացածը պայքարում են երկրորդ տեղի համար, Ռ. Հակոբյանը մերժում է, քանի որ նախագահական ընտրություններից առաջ էլ այդպես ասացին՝ կյանքը մերժում է այդ տեսակետները: Ի դեպ, Ռ. Հակոբյանն էլ գտնում էր, թե Րաֆֆի-Սերժ երկխոսության դուռը դեռ փակված չէ:

ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանը** Երեւանի ավագանու ընտրությունները, ի տարբերություն ոչ իշխանական ուժերի, փաստորեն քաղաքական չի համարում: Ըստ Սահակյանի՝ քաղաքական թիմերն իրենց հետագա ուղեծիրն են փորձում նշանակալից դարձնել Երեւանի ընտրություններով ու քաղաքականացնում են ընտրությունները, մինչդեռ առաջադրվածների մեջ այնպիսի կուսակցություններ կան, որոնք երբեւէ Երեւանի վերաբերյալ որեւէ հարց չեն բարձրացրել: Նա ՀՀԿ-ի չհաղթելու մասին չէր մտածում, քանի որ ՀՀԿ-ն առաջին տեղում է լինելու: Ն. Զոհրաբյանին էլ պատասխանեց, թե իրենք էլ թող ասեն՝ ՀՀԿ-ն 4-րդ տեղում է լինելու, «պրոգնոզներ են», որ ամեն մեկը կարող է անել, ինչ ամբարտավանություն. «Ենթադրենք՝ Հանրապետականը երկրորդ կամ երրորդ տեղ ընկնի, էս երկրի վիճակը կլավանա՞, լիֆտերը լա՞վ կաշխատեն, աղբահանությունն ավելի լա՞վ կլինի, ժողովրդի սոցիալական վիճակը կլավանա՞». Գ Սահակյանը սրանք կարգախոսներ համարեց՝ ուղղված մրցակիցներին: Նա նաեւ խլուրդային մտածողություն անվանեց ընդդիմախոսներին (Զարուհի Փոստանջյանը, անդրադառնալով Սերժ Սարգսյանի՝ Րաֆֆուն ուղղված ասուլիսային հատվածին, նշել էր, թե նա խուճապի մեջ է), խլուրդը խոնավություն է սիրում, լույսը տալիս ես՝ չի ուզում, իսկ շատ խոնավությունից էլ փտում եւ վատ հոտ է արձակում:

ՕԵԿ-ականն **Հովհաննես Մարգարյանի** համոզմամբ՝ համապետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես Երեւանի ավագանու ընտրությունների միջեւ կապ չկա, վերջինին պետք է մոտենալ միայն քաղաքը լավ կառավարելու տեսանկյունից: ՕԵԿ-ի թիմը լավն է եւ ամեն ինչ անելու է՝ հաղթեն ընտրություններում: Ճիշտ է, չմասնավորեցվեց, թե ինչ նկատի ունեն հաղթանակ ասելով՝ ներկայացված լինելը, թե այնքան տոկոս հավաքելը, որ գոնե փոխքաղաքապետի պաշտոն ունենան: Ըստ **Միեր Շահգելդյանի** էլ՝ Երեւանի ավագանու ընտրություններում մրցակցային եւ ծրագրային պայքար է սպասվում:

Ս. Խ.



# Երբ «եղբայրությունը» չափվում է փողով

**Մարտի 21-ին Վրաստանի սահմանապահները «չեզոք ջրերում կալանել են Աբխազիայից Տրապիզոն նավահանգիստ շարժվող՝թուրքական «Այդար» բեռնանավը եւ պահնորդությամբ տարել Փոթիի նավահանգիստ»: Այդ մասին նույն օրը հաղորդել են վրացական լրատվամիջոցները՝ առանց նշելու նավի անձնակազմի անդամների ինքնությունը կամ քաղաքացիությունը: Ի հավելումն, վրացական կողմը երեկ պաշտոնական հաղորդագրությամբ ծանուցել է, որ թուրքական դրոշով նավի անձնակազմի երկու անդամը Ռուսաստանի, երեքը Ուկրաինայի, չորսը Ադրբեջանի քաղաքացի են: Trend-ին հայտնի են դարձել Ադրբեջանի քաղաքացի նավաստիների անունները՝ Մահիր Սաֆարով՝ նավապետի ավագ օգնական, Բեյլար Հուսեյնով՝ նավի ավագ մեխանիկ, Ռուֆաթ Ջալիլով՝ երկրորդ մեխանիկ, Էլշադ Մահմուդով՝ էլեկտրիկ: Բոլոր նավաստիները մեղադրվում են «Օկուպացված տարածքների մասին» Վրաստանի օրենքը խախտելու մեջ:**

**Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ շաբաթասկզբին Բաքվում էին Վրաստանի ԱԳ եւ պաշտպանության նախարարները, եւ կողմերը սիրալիրություններ էին փոխանակել «երկու երկրների ռազմավարական գործընկերությունը խորացնելու» մասին, ինչին հետեւել էր ադրբեջանական մամուլի «հրեշտակային նախապատրաստությունը» առ Վրաստանում «հայկական սեպարատիզմի վտանգավորություն»: Դրանում ներգրավվել էին վրացի որոշ մտավորականներ, այդ թվում՝ Թբիլիսիում գործող այսպես կոչված «Սուխումի պետական համալսարանի» պատմաբան-դասախոսներ:**

**Դա դեռ բավական չէ, Ադրբեջանի ԱԳՆ-ն անոնսավորել էր, որ «մարտի 28-ին Բաթումում կկայանա Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի ԱԳ նախարարների հանդիպում»: Այս համապատկերին Վրաստանի սահմանապահ ծառայության կողմից թուրքական բեռնանավի կալանումը պարզապես աչք է ծակում: Քանի որ եթե Վրաստանը, Թուրքիան եւ Ադրբեջանը իրոք ռազմավարական դաշնակիցներ են եւ միմյանց հանդեպ ջերմ զգացմունքներ են տածում, ապա թուրքական բեռնանավը չպետք է հայտնվի աբխազական նավահանգստում, որովհետեւ միջազգայնորեն Աբխազիան Վրաստանի տարածք է: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա կարող ենք հարցնել, թե ինչո՞ւ են այդ երկրի նավաստիները ստիպված աշխատանք որոնում Թուրքիայում եւ այլուր: Չէ՞ որ Ադրբեջանը «Հարավային Կովկասի տնտեսության 75 տոկոսի սեփականատերն է»:**

**Այսքանից հետո մնում է ենթադրել, թե ի՞նչ տոնով կարող են Բաթումում հանդիպել Վրաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարները: Ի՞նչ պիտի պատասխանի հարեւանների հետ «զրո խնդիր ունեցող» Ահմեդ Դավութօղլուն Վրաստանի արտգործնախարար Մայա Փանջիկիձեին: Նման դեպքերում պետությունն ստիպված է լինում հոգալ իր քաղաքացիների իրավական պաշտպանության հարցերը: Ի՞նչ երեսով է Վրաստանում Ադրբեջանի դեսպանը դիմելու այդ երկրի պատկան մարմիններին: Ի՞նչ բացատրություն է տալու Ադրբեջանի ԱԳՆ-ն: Պատասխանատվությունը բարդելու է Թուրքիայի՞ վրա: Պաշտոնական Բաքուն առայժմ լռում է: Հավանաբար, որտեղ փողի խնդիր կա, «եղբայրության» մասին խոսակցությունները իմաստազրկվում են:**

Վ. Ա.

*ԹԲԻԼԻՍԻՆ, CNN-Ը, ՄԵՆՔ*

# Իսկ եթե Երեւանը հայտնվեր ամենավատ քաղաքների ցանկում

**Վրաստանի հետ որեւէ հարցում համեմատվելը ինչ-որ առումով օրինաչափ է դարձել մեզանում: Վրացական «հակակոռուպցիոն» ծրագրերի կենսագործումը շատերն են այսօր Հայաստանում որպես օրինակ ներկայացնում, «Վրացական երազանք» կուսակցության կողմից հարեւան երկրում ընտրական ճանապարհով իշխանափոխության իրականացման կրկնությունը Հայաստանում ոմանց համար դարձել է «հայկական երազանքի» պես մի բան, իսկ Թբիլիսին մեկ անգամ թեկուզ տեսածները ցանկանում են Երեւանում էլ տեսնել այն, ինչ տեսել են վրացական մայրաքաղաքում: Ի դեպ, Թբիլիսին ամերիկյան CNN հեռուստաընկերությունը, հիմնվելով «Մերսեր» կազմակերպության ուսումնասիրությունների վրա, ներառել է աշխարհի ամենավատ քաղաքների ցանկում: Այդ ցանկում, Վրաստանի մայրաքաղաքից բացի, ամերիկյան հեռուստաընկերությունը ներառել է նաեւ Սուդանի մայրաքաղաք Խարթումը, Եմենի մայրաքաղաք Սանան եւ Կոնգոյի մայրաքաղաք Քինշասան: Ամենավատ քաղաքների ցանկում հիշյալ քաղաքները հայտնվել են «այդ քաղաքներում քաղաքական անկայունության, իրավապահ մարմինների եւ մի շարք այլ ոլորտների պատասխանատուների գործունեության պատճառով»: Մեր մայրաքաղաքն այս ցուցակում չկա, ճիշտ է, Երեւանը ներառված չէ ու երբեք էլ ներառված չի եղել աշխարհի լավագույն քաղաքների ցանկում, բայց գոնե վատագույն քաղաքներից մեկը մեր մայրաքաղաքը չէ ու երբեք էլ չի եղել: Գուցե այդ պատճառով երեւանցիներն այսօր համացանցում անհամեմատ ավելի պասիվ են թբիլիսցիներից: Երեկվա տվյալներով՝ արդեն 3300 թբիլիսցի համացանցային ստորագրահավաք է սկսել, որպեսզի CNN-ը աշխարհի վատագույն քաղաքների ցանկից իրենց քաղաքը հանի: Թբիլիսցիները ընդգծել են, որ Վրաստանի մայրաքաղաքն ամենեւին էլ աշխարհի ամենավատ քաղաքներից մեկը չէ ու նրանց հետ համաձայնել են նաեւ Թբիլիսիում հյուրընկալված այլազգիներ՝ հատուկ ընդգծելով քաղաքի հարուստ մշակույթն ու խոհանոցը:**

**Պարզ չէ, կհանի՞ արդյոք CNN-ն Թբիլիսին այս ցանկից, պարզ չէ նաեւ, թե ի՞նչ կանեին երեւանցիները, եթե մեր մայրաքաղաքը հայտնվեր այս ցանկում: Գուցե լռությա՞ն մատնեին, ոմանք էլ ուրախանայի՞ն՝ բարձրաձայնելով, թե «անգամ CNN-ն է, ահա, մեզ հետ համակարծիք», գուցե սոցիալական ցանցերում առանձին խմբե՞ր բացվեին, որտեղ կներկայացվեին նաեւ այն թերությունները, որոնց մասին CNN-ը չի նշել՝ իբրեւ լրացում, պատկերի ամբողջականության համար... Եվ ամենակարեւորը, նրանք, ովքեր կբողոքարկեին, որ Երեւանը ներառված կլիներ աշխարհի ամենավատ քաղաքների ցանկում, մյուսների կողմից կանվանվեին «հանրապետական կցորդներ»՝ լավագույն դեպքում, իսկ վատագույն դեպքում՝ «ազգային զարթոնքին ու ճշմարտությանը դեմ կանգնող դավաճաններ»:**

**Թերեւս այսքանը Վրաստանի ու վրացիների հետ ամեն հարցում համեմատվելու մասին, միայն հավելենք, որ Թբիլիսին աշխարհի ամենավատ քաղաքներից մեկը չէ:**

ՆՈՎԻԿ ԱՖՅԱՆ

## 65-ամյակ

# Կածանների կանչը

Հայրը ամառները յայլաներում էր՝ անասնաբույծի իր պարտականություններին: Յայլաներ էր տանում նաեւ իր մեղվաընտանիքը՝ այդ զբաղմունքը հաճելիորեն համադրելով մասնագիտական բուն գործին:

Յայլաներում կիրակիներ, հանգստյան օրեր չկան, իսկ անելիք՝ ինչքան ուզես: Սակայն հոր համար ամեն տարվա այդ օրն առանձնակի էր՝ որդին այդ օրն այցի էր գալիս իրեն: Դա այն հազվագյուտ օրերից էր, երբ հայրն իրեն հեռու էր պահում առտնին գործերից՝ առավոտից տրամադրվելով որդուն սարերում ընդունելու երանավետ պահերին: Ամառվա եւ վաղ աշնան ամիսներին բազում անգամներ էին իրենց հանդիպումները, բայց այդ օրվա որդու գալը մի առանձնակի նշանակություն էր ստանում հոր համար, եւ ամենամյա այդ օրվա իրադարձության հաճելի կրկնության մեջ հրաշալի մի զգացողություն կարոտների խտուտն էր բերում:

Այդպես էր նաեւ որդու համար՝ այդ օրն ինքն անպայման պիտի բարձրանար յայլաները: Եթե այդ օրը աշխատանքային օր լիներ, պիտի շտապեր այդօրվա անելիքները շուտ ավարտել եւ շտապել գյուղ, նախ հայրական տուն անցնելով, ապա՝ դեպի յայլաներ: Մինչեւ խոտհարքի դաշտերը մեքենայով պիտի գնար, ապա անհարթ ու դարիվեր ճանապարհը հաղթահարեր ոտքով: Քամուց նազուտուզ անող մարդաբոյ խոտերի միջով ոտքով դանդաղ բարձրանում էր՝ մտովի հոր հետ խոսելով, եւ այդ ներքին երկխոսության մեջ ծնվում էին բանաստեղծական տողերը՝ այդ զրույցն արդեն բերել-հասցնելով իր եւ իր զավակների հետ ունեցած ներքին մենախոսության.

*«Ի՞նչ պետք է թողնեմ*
*Ինձանից հետո,*
*Որ քո հոգու մեջ նոր կրակ վառի,*
*Որ մոտեցնի ճանապարհն անվերջ*
*Քո եւ Աստծու մեջ ...»:*

Սա՝ երկու տղաներին ու դստերը նվիրված, որ «Պատգամ» վերնագրեց: Պատգամ նախ իր համար, որ չդառնա «պապերի հյուսած կյանքի պարանի քարկապուկը հանկարծ», որ ժառանգությունն ասածը սոսկ պարգեւ չընդունի, այլ, ասենք, մի ճանապարհ, որ նախորդների բացածն է, եւ շարունակությունն իրեն է տրված: Ահա այս շարունակությունն այնպես անցնել, այս ճանապարհն այն տեսքի բերել, որ ավելի դյուրանցանելի դառնա նոր եկողների համար:

Մտավախությո՞ւն է, որ հորից առատորեն ստացածը հանկարծ իր կողմից հավելում չունենա ու նոր տեսքով, նոր բովանդակությամբ չփոխանցվի իր զավակներին: Քարկապուկ չի ուզում, սոսկ ստացածի փոխանցողը լինողն էլ չի ուզում՝ այդպես շարունակություն չի լինում. այդպիսի շարունակության մեջ հավելումներ չկան, իր ներդրածը չկա: Այնինչ, վերցրածը պիտի իրենով լրացվի, իրենով հարստանա ու փոխանցվի արդեն իր զավակներին:

Այսպես, ներքին մտորումները հաճախ բարձրաձայնելով՝ ալպյան մաքրության ափնարոտիկով որդիների հետ բարձրանում էր դեպի յայլաները, ուր հայրն էր միշտ ամռան ամիսներին ապրում իր ձեռքով կառուցած տնակում: Տարիներով անցել է այդ ճանապարհը: Անցնում էր, երբ փոքր էր դեռ, եւ իր ուղեկիցները գյուղի տղաներն էին՝ ամեն մեկն իր ծնողին այցելող: Այդպես բարձրացել է այդ սարերը, երբ ավագ էր արդեն ու իր երեխաների համար ինքն էր ուղեկից: Ի՞նչ երանելի սպասում



այդ երկար ճանապարհին, երբ հայրը սարի բարձունքից պիտի նայեր ոլորուն կածաններով բարձրացող որդուն ու թոռներին: Նա լավ գիտեր, որ որդին այդ ճանապարհը երբեւէ ավտոմեքենայով չի անցնում, մանավանդ՝ ծառայողական մեքենայով, թեպետ աշխատանքի բերումով այդ հնարավորությունն ուներ: Նա լավ գիտեր այդ ճանապարհը ոտքով անցնելու որդու սովորույթի իմաստը. «Այս ճանապարհին իմ մանկությունն է հետս գալիս...»:

Հայրը միշտ կածանների ոլորաններում նրանց ճամփան էր պահում եւ, չհամբերելով, իջնում ընդառաջ: Սարերում հավքերի ձայնն էր, քամուց օրորվող խոտերի սոսափը, որոնց երբեմն խառնվում էր անսանձ ու անթամբ արածող ձիերի վրնջյունը: Հայրը՝ սարի սովոր, առույգ ու պինդ, ցավեցնելու չափ ամուր գրկում էր որդուն ու թոռներին, որոնց վրա տարածվում էր նրա զգեստներից եկող ուրցի անուշաբույրը:

Տնակում՝ կոշտ նստարան, կոշտ թախտ, մի հնամաշ ռադիոընդունիչ, անասնաբույժին անհրաժեշտ պարագաներ: Կաթնահամ այդ տնակում աշխարհիս բոլոր տեսակի դաշտային բազմերանգ ծաղիկների փնջեր էին՝ տարիներով պահված ու չորացած, նաեւ նոր բերված, որոնք հնաբույր այդ տնակին ակնահաճո տեսք էին տալիս ու անուշաբույրով լցնում: Պապի տաք, ամուր ձեռքերի շոյանքը խտուտ էր տալիս թոռների այտերը, եւ այդ շոյանքից անցյալ ու ներկա տարիները գերդաստանի պատմության շղթայում ակնածանքի, կյանքի շարունակական լինելու, երեք սերունդների փոխադարձ ամուր կապի ու վերաբերմունքի նոր օղակներ էին հյուսում:

Օրն անցնում էր աննկատ, եւ մայրամուտի վերջին ճառագայթների հետ գալիս էր նաեւ միմյանց հրաժեշտ տալու պահը: Ամենադժվարը դա էր. հայրն այդ պահից սկսած կարոտ էր ապրում, իրենք այդ պահից սկսած տխրում էին, որ պիտի իջնեն ալպիական գեղեցկության այդ հրաշք սարերից, որ պիտի բաժանվեն՝ Աստված գիտի, թե քանի օրով, քանի շաբաթով:

Վերադարձը կարոտ էր, վերադարձը բանաստեղծական տողերի ծնունդ էր, վերադարձը խոհերի ու ապրումների կուտակում էր ու ներքին մտորումների բարձրաձայնում.

*«Իմ զրույցն այս*
*Կամ աղոթքը լուռ,*
*Պատերիս ձայնը քեզ հասցնելու*
*Ճիգն արցունքահամ*
*Քանի՛ սերունդ է*
*Ու քանի դար է,*
*Որ մնացել է*
*մենախոսություն...»:*

...Ու մի օր էլ տնակն անվերադարձ հրաժեշտ տվեց իր բնակչին: Տնակը էլի տնակ էր «կոշտ թախտն ու կոշտ նստարանն էլի կային, բայց կենվոր, նստող-ելնող չկար: Ծաղիկները տխրում էին հայացքի պակասից, տնակի օդի մեջ կաթնահամ բույրը կամաց-կամաց վերացավ: Ծաղիկները, որ հայացքի էին սպասում՝ մի օր մոմեր տեսան, որ վառվում էին մահճակալի տեղում դրված խաչքարի առաջ: Իրենց ծանոթ, իրենց հարազատ եկվորներն էին մոմեր վառում, եւ տնակում մեկը պակաս էր: Շունչը կար, ոգին կար, կերպարը կար, միայն նա՝ տնակի իրական տերը չկար: Հիմա երեքով էին՝ հայրն ու երկու տղաները, որոնց ներս հրավիրողը խաչքար էր այլեւս՝ լուռ, բայց անհաղորդ: Լսում էր հուշեր, տխրորեն բարձրաձայնվող մտորումներ եւ չէր պատասխանում: Նրա պատասխանը որդու մտորումն էր, որ մոմի լույսի եւ խունկի բույրի հետ թափառում էր տնակի պատերով ու բարձրանում, բարձրանում էր վեր՝ հաղորդվում երկնային ճանապարհներում իր հավիտենական ուղին բռնած հոր հետ՝ թեթեւություն, հանգստություն բերելով նրան, որ անհետք չի գնացել եւ մոռացում չունի: Մոմերի մարելու հետ դուռը փակվում էր դրսից, եւ տնակի մեջ երկար մնում էր խունկի հոտը:

Հետդարձի ճամփին ոլորուն կածանների վրա օդը լցվում էր բանաստեղծական տողերի շնչով, որոնք սարից իջնողի մրմունջն էին ու կարոտը, «ափսոսանքն էին ու հարազատի հեռացումի անմարելի հուշը.

*«Բաժանվեցինք մենք լուռ,*
*Կարծես հրաժեշտ էր*
*սովորական,*
*Ու բաժանումն այդ*
*Նման էր*
*Մեր համր զրույցներին ...»:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ

## ՃՇԳՐՏՈՒՄ

# «Մեծ Եղեռն»ը «Ցեղասպանութիւն» Չի Նշանակեր

**Ցաւալի է, որ վերջերս որոշ հայատառ եւ հայկական անգլիատառ թերթեր, փոխանակ իրենց սխալ եւ վրիպած եզրերը սրբագրելու, կը շարունակեն սայթաքումը՝ հաստատելու համար կարծէք վրիպակի ճշգրտութիւնը:**

**Խօսքը «Մեծ Եղեռն» եւ «Ցեղասպանութիւն» բառերու նոյնիմաստ եւ հոմանիշ չըլլալուն կ՛ակնկարկուի, մինչ իրենք գործնականօրէն նոյն ծիրին շուրջ կը դառնան առանց անդրադառնալու, որ Թուրքիոյ ջրաղացին ջուր կը հայթայթեն 1915-1923ին հայերու դէմ գործադրուած Ցեղասպանութիւնը յաճախակիօրէն «Մեծ Եղեռն» կոչելով:**

**Թերթատենք թերթերը եւ կարդանք Հռոմի Սրբազան Պապին Հայաստան կատարած այցի կապակցութեամբ լոյս ընծայուած նկարագրութիւնները, Հայոց քրիստոնէութիւնը պետական կրօն ընդունման 1700 ամեակի տօնակատարութիւնները եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի օծման արարողութիւնը, յիշենք Պապին Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան յուշակոթողի առաջ աղօթքին մէջ «Մեծ Եղեռն» բառերու գործածութիւնը եւ ո՛չ թէ «Ցեղասպանութիւն» բառը, որ Ռաֆայէլ Լեմքին մասնայատուկ ուշադրութեան արժանացնելով կրկնեցին հայ եւ օտար թերթեր, ներառեալ «Նիւ Եորք Թայմզ»ը:**

**Բացառուած է եւ մեկնաբանութիւն ընելը աւելորդ, որ «Մեծ Եղեռն» եւ Genocide բառերը նոյն իմաստը չունին եւ կարելի չէ փաստել, որ հոմանիշ են: Genocide բառին հայերէնը «Ցեղասպանութիւն» է եւ ուրիշ հոմանիշ հայերէն բառ չունինք: «Եղե՞ռն, թէ Ցեղասպանութիւն» վերտառութիւնը կրող մեր յօդուածով (հրատարակուած՝ «Նոր Օր», յունիս 3, 2000 թ.) փաստարկեցինք, որ «Մեծ Եղեռն»ը համապատասխան կամ հոմանիշ չէ «Ցեղասպանութեան» եւ թելադրեցինք հրաժարի՛լ այս բառին գործածութենէն, եթէ «Ցեղասպանութիւն» բառին իմաստը կուզենք արտայայտել՝ ինչո՞ւ... «Ցեղասպանութիւն»ը=Genocide-ի, որ միջազգայնօրէն ընդունուած քաղաքական քրէագործութիւն է՝ ենթակայ միջազգային դատապարտման, պատիժի եւ հատուցման, բայց ոչ «Եղեռն»ը...**

**«Եղե՞ռն, թէ Ցեղասպանութիւն» մեր յօդուածին մէջ ինչպէս նշեցինք, պրպտելով «Հայերէն-անգլերէն», «Անգլերէն-հայերէն» բառարանները հետեւեալ արդիւնքը ձեռք ձգած էինք.**

**1- Genocide=«Ցեղասպանութիւն» եւ ո՛չ մէկ ուրիշ բառ:**

**2- Եղե՞ռն=Crime, atrocity, murder, brutality, massacre, tragedy, calamity.**

**Տեղին է յիշել, որ Իսրայէլի արտաքին գործոց նախարարը քանի մը ամիս առաջ Սթամպուլի մէջ, հայերէն «Եղեռն» բառի համապատասխան բառ գործածեց՝ tragedy, հաճոյք պատճառելով հայերու դէմ Ցեղասպանութիւն կիրարկած թուրքին. այս իմանալով հայ թերթերու խմբագիրներ եւ յօդուածագիրներ դոհ ու բոհ բարձրացուցին, առանց անդրադառնալու, որ մասամբ իրենք են այդ tragedy բառին գործածութեան տուն տուողը:**

**Ինչպէս ցաւալի է, որ որոշ անձինք փոխանակ ժամանակին հետ քայլ առնելու, ետ կը մնան, ալ աւելին՝ կ՛այպանեն զանոնք, որոնք կը յառաջանան քաղաքական ընթացքի զուգահեռ: Եթէ մեր գրականութեանը, պատմութեանը, 1915-էն ետք ժամանակագրութեանը, յուշագրութեանը, 1915-1923-ի Ցեղասպանութեան առնչուող նիւթերուն ակնարկ մը նետենք, կը նկատենք, որ մինչեւ 1944 թ., երբ Ռաֆայէլ Լեմքին Genocide - Արամ Անտոնեան «Ցեղասպանութիւն» բառը հնարեց եւ անոր իմաստը սահմանեց ու շրջանառութեան դրաւ, հայերը մինչ այդ եւ ետքը գործածած են՝ կոտորած, ջարդ, սպանդ, արհաւիրք, ողբերգութիւն, աղէտ, եղեռն, մեծ ոճիր, մեծ եղեռն բառերը:**

**Այսպէս ուրեմն, երկար տարիներ «ՄԵԾ ՈՃԻՐ» բառերը գործածուեցան Ցեղասպանութենէ վերապրած գրող Արամ Անտոնեանի «Մեծ Ոճիր»ը գրքոյկին հիման վրայ հրատարակուած 1921-ին, ուր վաւերագրականօրէն ներկայացուած են «Հայոց Ցեղասպանութեան» գործադրման հրահանգները, հեռագիրներն ու միջոցառումները... «Մեծ Եղեռն» եզրի մեծագոյն տարածողը հանդիսացաւ, պատկառելի եւ նուիրեալ դաստիարակ, կուսակցական եւ ներհուն խմբագիր Գերսամ Ահարոնեանի խմբագրած «1915-1965 Յուշամատեան Մեծ Եղեռնի» հաստափոր մեծապէս գնահատելի հատորը, լոյս ընծայուած Բէյրութ 1965-ին (Բ. հրատարակութիւն՝ 1987): Հակառակ անոր որ նոյն գիրքին մէջ «Թրքական Ցեղասպանութիւնը» վերտառութիւնը կրող իր յօդուածը լայնօրէն կը նկարագրէ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան «Ցեղասպանութիւն» - Genocide բառի իմաստին սահմանումը՝ քրէական բնորոշումը տալով:**

**Այս ծաւալուն հատորին հրատարակումէն ետք ընդհանրացաւ «Մեծ Եղեռն»ի գործածութիւնը գրագէտներու, խմբագիրներու, կրօնականներու կողմէ Հայոց Բնաջնջումը յատկանշող եւ միջազգայնօրէն ընդունուած «Ցեղասպանութիւն» բառին փոխարէն... եւ մինչեւ այսօր կը շարունակուի: Սխալ արարք մը՝ որուն համար մեղաւորները մենք հայերս ենք, որ կը յամառինք մեր սխալները սրբագրելու եւ առիթ կ՛ընծայենք օտար քաղաքագէտներու, որ «Մեծ Եղեռն»ը գործածեն չվիրաւորելու համար իրենց թուրք դաշնակիցները եւ Պապը, որ «Մեծ Եղեռն» բառերը հայերէնով արտասանեց, հաւանաբար հարազատ եւ սրտակից երեւալու համար հայերուս... այս պարագային պէտք է մեղադրել այն հայ անձը կամ կրօնականը, որ Պապին թելադրած է «Մեծ Եղեռն»ը՝ փոխանակ «Ցեղասպանութիւն» բառին...:**

**Ընդունելի էր «Մեծ ոճիր» կամ «Մեծ Եղեռն» կոչել Հայոց Ցեղասպանութեան ենթարկուիլը մինչեւ 1944, երբ շրջանառութեան մէջ դրուած «Ցեղասպանութիւն» բառը եւ իմաստը չէր սահմանուած, սակայն այդ թուականէն ետք եւ մանաւանդ 1974-էն ետք, երբ հայոց դէմ գործուածը նկատուեցաւ «20-րդ դարու առաջին Ցեղասպանութիւնը», ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու յանձնաժողովէն, այլ նաեւ 1987-ի Եւրոպական Խորհուրդի ժողովին Հայոց Ցեղասպանութեան ենթարկուիլը դատապարտելէ ետք, շարունակել գործածել «Մեծ Եղեռն», «Մեծ Ոճիր», «Մեծ Աղէտ» բառերը սխալ եւ ազգավնաս է: Ըստ մասնագէտներու, թէեւ որոշ իմաստի տարբերութիւն կայ «Ցեղասպանութիւն», «Եղեռն» եւ «Աղէտ» բառերու, ինչ որ ոճրագործի եւ զոհի կ՛առնչուի, այսինքն «Ցեղասպանութիւնը» ոճրագործը կը ներկայացնէ, իսկ եղեռնն ու աղէտը՝ զոհը, ասոր համար ոմանք գործածած են «Հայասպանութիւն»՝ փոխանակ «Ցեղասպանութիւն» եզրին:**

**Իրականութեան մէջ աւելի ճշգրիտ պիտի ըլլայ «Հայոց Ցեղասպանութեան ենթարկուիլը» եւ ոչ «Հայկական Ցեղասպանութիւն» եզր գործածելը, քանի որ սխալ իմաստ կ՛արտայայտէ, այսինքն՝ կատարողի եւ ոչ ենթարկուող զոհի: Յամենայն դէպս միջազգայնօրէն «Ցեղասպանութիւն» Genocide բառն է, որ կը գործածուի եւ պէտք է օգտագործուի Հայոց Ցեղասպանութեան ենթարկուիլը արտայայտել համար:**

**Սորվինք մեր սայթաքումները եւ սխալները սրբագրել եւ յիշենք Գերսամ Ահարոնեանի պատգամը. «Ցեղասպանը պէտք է վերջապէս ընդունի իր յանցանքը եւ պէտք է հատուցում ընէ հայ ժողովուրդին»: Չմոռնանք, թէ «Մեծ Եղեռնը» «Ցեղասպանութիւն» չի նշանակեր:**

ՏՈՔԹ. ՅԱԿՈԲ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ
Լոս Անճելըս

# Կիպրոսի խոշորագույն բանկը խնդրեց հարկել ավանդները

Երեկ հետմիջօրեին Կիպրոսի խոշորագույն բանկը՝ Bank of Cyprus-ը, երկրի իշխանություններին է դիմել ավանդների միանվագ հարկման մերժված օրինագիծն ընդունելու խնդրանքով: Այդ պահին խորհրդարանում հարցի քննարկումը դեռ շարունակվում էր, տեղեկացնում է Ֆրանսպրես գործակալությունը:



Բանկի վարչության նախագահ Անդրեաս Արտեմիսը հայտարարել է, որ միայն նախագծի ընդունումը թույլ կտա ստանալ Եվրոմիության եւ ԱՄՀ-ի խոստացած 10 մլրդ եվրո օգնությունը: Հակառակ դեպքում երկրի բանկային համակարգը կփլուզվի, ասել է նա:

Ավելի վաղ ՌԴ ֆինանսների նախարար Անտոն Սիլուանովը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել էր, որ իրավիճակից ելք գտնելու նպատակով անցկացված ռուս-կիպրական բանակցությունները ավարտվել են անարդյունք, քանի որ կիպրացիների առաջարկությունները չեն հետաքրքրել ռուսական կողմին: Հայտնի է, որ ռուսաստանցի նորահարուսները տասնյակ միլիարդների հասնող ակտիվներ ունեն Կիպրոսում, բայց Մոսկվային չէին հետաքրքրել Կիպրոսի գազի հանքավայրերի ակտիվներով պետական ընկերություն հիմնելու, պարտատոմսեր գնելու եւ բաժնետերեր դառնալու առաջարկությունները:

Կիպրոսի խորհրդարանում քննարկվում է նաեւ երկրում արտակարգ տնտեսական դրություն հաստատելու հարցը: Ներկայացված օրինագծի ընդունման դեպքում ֆինանսների նախարարը եւ Կենտրոնական բանկը կունենան արտակարգ լիազորություններ (ընթացիկ հաշիվների օգտագործման սահմանափակում, երկարաժամկետ ավանդների պայմանագրերի վաղաժամկետ խզման արգելում եւ այլն):

# Սարկոզիին մեղադրանք ներկայացվեց Բետանկուրի գործով

Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզիին ներկայացվել է մեղադրանք, ըստ որի նա ապօրինաբար փող է ստացել L'Oréal ֆիրմայի սեփականատեր Լիլիան Բետանկուրից: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը՝ վկայակոչելով Սարկոզիի փաստաբաններին: Խոսքը 2007 թ. նախընտրական արշավի միջոցների մասին է:

Մեղադրանքը ներկայացվել է կասկածյալի հարցաքննությունից եւ Բետանկուրի աշխատակիցների հետ նրա առերեսումից հետո: Քննիչները փորձում են պարզել, թե Սարկոզին քանի անգամ է հանդիպել Ֆրանսիայի ամենահարուստ կնոջ հետ: Նախկին նախագահը խոսում է մեկ հանդիպման մասին, մինչդեռ Բետանկուրի շրջապատի մարդիկ ասում են, որ եղել է մի քանի հանդիպում:



Սարկոզիի փաստաբանը անարդար է համարում մեղադրանքը եւ մտադիր է գանգատարկել քննիչների որոշումը:

Ավելի վաղ Բետանկուրի գործի շրջանակներում մեղադրանքներ էին ներկայացվել 17 անձանց:

Քննության տվյալներով՝ Սարկոզին Բետանկուրից ստացել է 150 հազար եվրո, մինչդեռ Ֆրանսիայի օրենքները նախագահության թեկնածուին թույլատրում են մասնավոր անձանցից ստանալ 4,6 հազար եվրոյից ոչ ավելի:

Տվյալ գործի շրջանակներում 2012-ի հուլիսին խուզարկություններ էին անցկացվել Սարկոզիի տանը եւ աշխատասենյակում, ինչպես նաեւ այն իրավաբանական ընկերությունում, որի համատերն է նա: Այդուհանդերձ նոյեմբերին քննիչները որոշել էին մեղադրանքներ ներկայացնել նախկին նախագահին՝ նրան թողնելով վկայի կարգավիճակում:

90-ամյա Լիլիան Բետանկուրը տառապում է Ալցհայմերի հիվանդությամբ: 2011-ին նրա հարազատները հասան այն բանին, որ նա ճանաչվեց անգործունակ:

# Աշխարհը ողջունում է զենքը վայր դնելու Օջալանի կոչը

*1-ին էջից*

**Որքան էլ հստակ պատկերացում չտան Թուրքիայում քրդական հարցի խաղաղ կարգավորման հետագա քայլերի, առավել եւս PKK-ի զինված պայքարի դադարեցման դրդապատճառների մասին, այդուհանդերձ խիստ հետաքրքրական են Օջալանի ուղերձին վարչապետ Էրդողանի, թուրքական եւ քրդական շրջանակների տված գնահատականները:**

**Դիարբեքիրում ուղերձի ընթերցման պահին վարչապետ Էրդողանը Կոպենհագենից ուղեւորվում էր Ամստերդամ, որտեղ էլ ասել է. «Իմ կարծիքով, այս ուղերձը դրական զարգացում է: Սակայն կարեւորն այնտեղ արտահայտված տեսակետների առաջիկայում կիրառումն է: Պետք է վայր դնել զենքը: Եթե (PKK-ի մարտիկները) հեռանան երկրից, անդորրը կհաստատվի եւ մեր զինված ուժերը ռազմական գործողությունների կարիքն այլեւս չեն զգա: Անկեղծ ասած, ես հրապարակում կցանկանայի տեսնել նաեւ մեր դրոշը»:**

**Գորշ քայլերի քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Դեւլեթ Բահչելին ուղերձի առնչությամբ Օջալանին դատապարտելուց զատ, դատապարտել է նաեւ վարչապետ Էրդողանին: Նա մասնավորապես ասել է. «Այն հրապարակում, որտեղ չկար թուրքական գեթ մեկ դրոշ, ամենուր Իմրալիի մարդասպանին (Օջալանին) պատկերող ցուցապաստառներն էին, չդադարող «Քուրդիստան» կոչերը եւ դավաճանության դրսեւորումները, որոնք սեւ ամպերի պես պատել էին մեր հայրենիքի սուրբ հողը: Ակնհայտ դարձավ, որ ահաբեկիչների մարդասպան պարագլուխն ու երկրի վարչապետը ձայնակցում են: Թուրք ազգը երբեք չի մոռանա ու չի ների անջատողական դրսեւորումներն ու անջատողականներին: Այն, ինչ զենքի ուժով չհաջողվեց PKK-ին, կառավարությունը փակ աչքերով մատուցում է: Թուրք ազգի ճակատագիրը հանձնվել է մարդասպանի քմահաճույքին եւ հոգեբանական առավելությունը անցել է PKK-ի ու գլխավոր մարդասպանի ձեռքը»:**

**«Ժողովրդավարական հասարակություն» կոնգրեսի համանախագահ եւ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավոր Այսել Թուղլուքն ուղերձի ընթերցումից հետո հենց Դիարբեքիրում ելույթ է ունեցել, հայտարարել է, որ Օջալանի ուղերձը ազատության ու ժողովրդավարության մանիֆեստ է, իրենք ձգտում են հաշտության եւ ցանկանում են արժանապատիվ խաղաղություն նվիրել երկրի ժողովուրդներին: Վերջում տիկին Թուղլուքը ավելացրել է. «Մենք՝ քուրդ գործիչներս, պաշտպանում ենք մեծարգո Օջալանի կոչը: Խաղաղությունը աբստրակտ արտահայտություն չէ, այլ հասարակական պահանջ: Եվ կարող ենք հասնել խաղաղության: Այն, ինչ մեզ հաջողվել է, ձեռք ենք բերել շնորհիվ մեր պայքարի ու դիմադրության: Հետայսու եւս պայքարելու ենք ու դիմադրելու, եւ պայքարով ազատագրվելու»:**

**Ի դեպ, Օջալանի քուրդ մարտիկներին հասցեագրված զենքը վայր դնելու եւ Թուրքիայից հեռանալու ուղերձը դրական արձագանք է գտել նաեւ Հյուսիսային Իրաքում PKK-ի կենտրոնակայան Ղանդիլում:**



# Բողոքի ցույց Հաագայում ընդդեմ վարչապետ Էրդողանի

**Այդ մասին թուրքական լրատվամիջոցների հետ տեղեկացնում է նաեւ քրդերի Firatnews գործակալությունը: Ըստ տեղեկության, մեկօրյա աշխատանքային այցով Հոլանդիա մեկնած Էրդողանին Հաագայում բողոքի ցույցով է դիմավորել «Ժողովրդավարական միասնություն» պլատֆորմը, որը կազմավորված է քրդական, թուրքական, ասորական եւ հայկական միություններից:**

**Ցույցին մասնակցել է ավելի քան 350 մարդ: Ցուցարարները Թուրքիայի վարչապետին անվանել են «ժամանակակից ֆաշիզմի ներկայացուցիչ»: «Ժողովրդավարական միասնություն» պլատֆորմը այնուհետեւ հրապարակել է հայտարարություն, որտեղ Էրդողանն ու նրա «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության իշխանությունը մեղադրվել են բնաջնջման ու ժխտողականության քաղաքականությունը երկրում շարունակելու մեջ: Միաժամանակ ընդգծվել է, որ այդ քաղաքականության հետեւանքով վերջին 10 տարիներին Թուրքիայում մեծամասնությունը քուրդ շուրջ 15 հազար քաղաքական, հասարակական գործիչ, քրդական շարժման ակտիվիստ, գիտնական, հարյուրավոր լրագրող եւ իրավաբան բանտարկվել են, ինչպես նաեւ երկրում աննախադեպ աճել է անհանդուրժողականությունը ոչ մահմեդականների նկատմամբ:**

**Ցուցարարները Հոլանդիայի կառավարությունից պահանջել են ճնշում գործադրել Թուրքիայի վրա եւ աջակցել քուրդ ժողովրդի առաջնորդ Օջալանի սկզբնավորած հաշտեցման գործընթացին: Այդ ընթացքում Թուրքիայի վարչապետի մեքենայի վրա ապակե շիշ շպրտելու համար ձերբակալվել է 4 քուրդ երիտասարդ:**

Հ. Չ.

# «Բանակում, չգիտես ինչու, ինքնասպանության են դիմում քուրդ, ալավի եւ հայ զինծառայողները միայն»

**Այդ մասին «Թարաֆ» թերթին հայտարարել է Այդին Բարանը, որի ժամկետային զինծառայող որդին՝ Օզերը, 2009-ի սեպտեմբերին իբր ինքնասպան էր եղել: Ի դեպ, ինչպես մարտի 21-ի համարում գրել է թուրքական թերթը, Օզեր Բարանը մեկն է այն 967 զինծառայողներից, որոնք վերջին 10 տարիներին «ինքնասպանության» են դիմել թուրքական բանակում:**

**2009-ից ի վեր լռություն պահպանող Այդին Բարանը ինքնասպանության նոր լուրը թերթում կարդալուց հետո որոշել է արտահայտվել: Նա ասել է, որ ամեն անգամ, երբ բանակում ինքնասպանության միջադեպի մասին է կարդում, կրկնապատկվում է իր վիշտը, չգիտես ինչու «ինքնասպանություն» գործած զինծառայողների գերակշիռ մասը քուրդ է, ալավի կամ հայ, ինչը չի կարող պատահականություն լինել:**

**Այնուհետեւ Բարանն ավելացրել է. «Մենք ծնունդով Դերսիմից ալավի քուրդ ենք, չեմ հավատում, որ իմ որդին ինքնասպան լիներ: Որդուս մահից հետո տուն զանգահարեց երզնկացի մի զինծառայող, խոստացավ գալ մեր տուն եւ պատմել ճշմարտությունը, սակայն այդպես էլ չերեւաց: Ունեմ զորակոչի տարիքի եւս երկու որդի: Մեր շրջապատում առնվազն 10 երիտասարդի նույնպես ինքնասպանություն են վերագրել: Նրանց ընդհանուր առանձնահատկությունը այլ է, որ բոլորն էլ քուրդ են եւ ալավի: Կարծում եմ, այս առանձնահատկությունը պետք է բացատրություն ունենա»:**

Հ. Չ.

# Պապական գահը փոխարինվեց բազկաթոռով



**Վատիկանի Առաքելական պալատում տեղադրված պապական գահը փոխարինվել է սովորական բազկաթոռով: La Stampa թերթը տեղեկացնում է, որ դա արվել է Կաթոլիկ եկեղեցու նոր հովվապետ Ֆրանցիսկի ցուցումով: Պապը նշել է, որ իր նստավայրում «բավականաչափ տեղ կա երեք հարյուր մարդու համար» եւ կարգադրել է վերակառուցում սկսել պալատում:**

**Ֆրանցիսկ պապը՝ նախկին կարդինալ Խորխե Մարիո Բերգոլիոն, գահակալեց մարտի 19-ին եւ մտադրվել է պարել իր նախորդներից ավելի համեստ կյանքով եւ ակտիվորեն օգնել կարիքավորներին: Նա մասնավորապես հրամայել է, որ ավագ հինգշաբթի օրվա (մարտի 28-ի) խորհրդավոր ընթրիքի հիշատակման պատարագի հրավերներ ուղարկեն աղքատներին:**

**Բացի դրանից, ըստ BBC-ի տվյալների, պապը մտադրվել է մարտի 28-ին Հռոմում անչափահասների բանտ այցելել եւ լվանալ կալանավորների ոտքերը: Այդ ծեսը Խորխե Մարիո Բերգոլիոն մշտապես կատարում էր ավագ հինգշաբթի օրը, երբ ինքը Բուենոս Այրեսի արքեպիսկոպոսն էր:**

**76-ամյա Ֆրանցիսկը պատմության մեջ պապական գահին նստած առաջին արգենտինացին է եւ առաջին ճիզվիտը: Կարդինալների ժողովը նրան պապ ընտրեց մարտի 13-ին, քանի որ Բենեդիկտոս 16-րդ պապը փետրվարին հրաժարական էր տվել վատառողջության եւ Կաթոլիկ եկեղեցու որոշ սկանդալների պատճառով:**

# Նատալի Արոյանը Ավստրալիայի օպերայի բեմում

Դեռեւս անցյալ տարվա սեպտեմբերի 25-ին, անդրադառնալով ավստրալահայ երիտասարդ երգչուհու՝ Նատալի Արոյանի (սոպրանո) Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում երեւանյան համերգին, «**Ազգի**» մշակույթի էջում գրել էինք. «Հաջորդ տարի նա հանդես է գալու Սիդնեյի օպերային թատրոնում որպես մեներգչուհի»: Այժմ Սիդնեյի Հայկական բարեգործական ընդհանուր միության հրատարակությամբ լույս տեսնող «Միութիւն» երկլեզու (հայերեն եւ անգլերեն) ազգային, քաղաքական եւ մշակութային ամսաթերթի այս տարվա հունվար-փետրվար միացյալ համարից տեղեկանում ենք, որ, իրոք, Սիդնեյի օպերային թատրոնը պայմանագիր է կնքել նրա հետ եւ փետրվարի 9-ին նա իր առաջին ելույթն է ունեցել՝ ստանձնելով Միմիի գլխավոր դերը Պուչչինիի «Բոհեմ» օպերայում: Նա այդ դերը եւս 12 անգամ կատարել է փետրվար-մարտ ամիսների ընթացքում:



Առաջիկայում, ըստ ամսաթերթում տպագրված ծրագրի, Նատալին հանդես է գալու նախ Վերդիի «Աիդա» օպերայում Մելբուռնի Արվեստի կենտրոնում (ապրիլ-մայիս ամիսներին), իսկ այնուհետեւ՝ դարձյալ Վերդիի, բայց այս անգամ «Տրավիատա» օպերայում՝ Սիդնեյի օպերային թատրոնում (հուլիս-օգոստոս ամիսներին):

Նատալի Արոյանը ծնվել է Սիդնեյում եւ ստացել կրկնակի բարձրագույն կրթություն տեղի կաթոլիկական համալսարանում՝ բիզնեսի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագիտությունների գծով: Հետաքրքրությունը օպերային արվեստի նկատմամբ առաջացել է, երբ հանդիպել է ճանաչված մեցցո-սոպրանո Լիլի Ավչյանին: 2004-ին ընդունվել է Սիդնեյի կոնսերվատորիա: 2009-ին շարունակել է ուսումը Նյու Յորքի Ման քոլեջի Ռութ Ֆալկոնի դասարանում: Դեռ ուսանելու տարիներին Նյու Յորքում Նատալին ելույթներ է ունեցել Վերդիի, Մոցարտի եւ Մենոտիի օպերաներում:

Ավստրալիա վերադարձին՝ 2011-ին առաջին տեղն է գրավել «Իտալական օպերայի հիմնադրամի» մրցույթում: Այնուհետեւ Մետրոպոլիտենում (Նյու Յորք) կատարել է Արմիդայի դերը Գլյուկի համանուն օպերայում:

Նորանոր հաջողություններ երիտասարդ երգչուհուն:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Շուտով՝ «Armenia» Music Awards 2013

«Արմենիա» պրոդյուսերական կենտրոնը ներկայացնում է «Armenia» Music Awards 2013: «Արմենիա» երաժշտական ութերորդ ամենամյա մրցանակաբաշխությունը տեղի կունենա ապրիլի 20-ին Կրեմլի պետական պալատում, որն ինչպես անցյալ տարի, այս տարի եւս կառանձնանա հետաքրքրական հյուրերով, շոու-ծրագրով, ինչպես նաեւ հատուկ մրցանակներով:

Ընդգծենք, որ մրցանակաբաշխության մեկնարկը տրվել է դեռեւս 2006 թվականին, այն սկզբում կրում էր «Անելիք», ապա՝ «Տաշիր» եւ այժմ՝ «Armenia» Music Awards անվանումը:

Մրցանակաբաշխությունն առանձնանում է իր հարուստ պատմությամբ, քանի որ «Armenia» Music Awards-ը մեկ հարկի տակ է համախմբում ինչպես հայկական, այնպես էլ միջազգային էստրադայի ամենահայտնի եւ հանրության կողմից սիրելի արտիստներին: Վառ օրինակներն են՝ Ալեն Դելոն, Դեմիս Ռուսոս, Շեր, Ալաբինա, «Բոննի Էմ», Սակիս Ռուվաս, Անտոնիա, Ալեքսանդրո Սաֆինա, Խուլիո Իգլեսիաս, Վլադիմիր Պրեսնյակով, Իոսիֆ Կաբզոն, Վլադիմիր Սոլովեւ, ինչպես նաեւ Իրինա Ալեգրովա, Լոլիտա, Դիմա Բիլան, «Ա-ստուդիո», Լեւ Լեշենկո, Դենիս Մայդանով, Թամարա Գվերդցիտելի, Ալեքսանդր Մասլյակով, եւ ռուսական ու արտասահմանյան շատ այլ արտիստներ: Իսկ հայկական էստրադային ներկայացուցիչներից՝ Ֆլորա Մարտիրոսյան, Կոստանդին Օրբելյան, Զիվան Գասպարյան, Ռուբեն Մաթեւոսյան, Թաթա Սիմոնյան, Սիրուշո, Անդրե, Արամե, Հայկո, Նունե Եսայան, Արա Մարտիրոսյան, «Դորիանս» ռոք խումբ եւ այլն:



Հանդիսությանը առանձնահատուկ հմայք են հաղորդելու հանդիսավարները՝ Յանա Չուրիկովը, Տինա Կանդելակին, Միխայիլ Գալուստյանը, Սաշի Սպիվակովան, Դմիտրի Խառատյանը, Լերա Կուդրյավցեւան, Օլգա Շելեստը, Ալեքսանդր Օլեշկոն եւ այլք: Նրանք իրենց պրոֆեսիոնալիզմով կարողանում են ապահովել 6 ժամյա մրցանակաբաշխության դինամիկան:

Հատկանշական է, որ «Արմենիա» պրոդյուսերական կենտրոնը երբեք աչքաթող չի անում երիտասարդ հեռանկարային արտիստներին եւ յուրաքանչյուր տարի մրցանակաբաշխության շրջանակում հանձնում է «Դեբյուտ» եւ «Տարվա հայտնություն» մրցանակները:

Մրցանակաբաշխության լսարանն առանձնանում է նաեւ իր մեծությամբ, քանի որ Հանրային հեռուստաընկերության հեռարձակման շնորհիվ այն դիտում են 137-ից ավելի երկրներում:

Առաջիկայում «Armenia» Music Awards 2013-ը հանդիսականին կուրախացնի հետաքրքրական անակնկալներով:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Նոր գիրք՝ «Անտարես» հրատարակչությունից

Ժողովածուն հեղինակի առաջին գիրքն է, որտեղ ընդգրկված պատմվածքները, իր իսկ բնորոշմամբ, հայ ինտերակտիվ արձակի նմուշներ են, որոնց հատուկ են համահեղինակության եւ խաղի սկզբունքները: Իբրեւ համահեղինակ կարող են հանդես գալ ինչպես արդեն կայացած գրողներ («Թռչող հեծանիվ», «Խորհրդավոր նախաճաշ»), այնպես էլ՝ ցանկացած ընթերցող («Պ(ոչ)ԱՏՈՒՄ»): Խաղը Արմեն Օհանյանի գործերի անքակտելի մասն է, ընթերցողին ներգրավելու եւ արդի





հայ գրական գործընթացի մեկուսացումը հաղթահարելու նրա նախընտրած միջոցը («Պահմտոցի», «Գերաստղ Մարիո», «Մաստրյոշկա», Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր»): Որպես պոստմոդեռնիզմի հետեւորդ՝ նա վերաիմաստավորում է անցյալը՝ հայ արձակում տարածք բացելով թե՛ հին, թե՛ նոր հերոսների համար («Կիկոսի վերադարձը», «Կարմիր բերԵՏ», «Ռադիո Երեւան»):

Գիրքը կարող եք ձեռք բերել «Հայ գիրք» գրախանութների ցանցից:



# «Ինչպիսին ազգի հերոսներն են, այնպիսին էլ երկիրն է... »

**Փետրվարի 19-ին Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ «Люди мира. Знаменитые армяне России» գրքի շնորհանդեսը: Գրքի հեղինակը լրագրող եւ երաժիշտ Ստեփան Հեքիմյանն է:**

**Գրքի ստեղծման աշխատանքները սկսվել են 2010 թ.-ից: Գրքում պատմվում է հայ մեծերի՝ Շառլ Ազնավուրի, Արմեն Ջիգարխանյանի, Արա Աբրահամյանի, Անաստաս Միկոյանի, Արթուր Չիլինգարովի եւ այլոց մասին:**

**«Գրքի ինֆորմացիան չենք վերցրել ո՛չ ինտերնետից, ո՛չ էլ այլ աղբյուրներից: Այն անհատական շփումների եւ հանդիպումների արդյունք է: Գրքի ստեղծման հիմնական նպատակը ազգիս հերոսներին, մեծերին ներկայացնելն էր... Ինչպիսին ազգի հերոսներն են, այնպիսին էլ երկիրն է: Չեք պատկերացնի՝ հայերը ինչքան լավն են»,- ասաց Ստեփան Հեքիմյանը:**

**Ստեփան Հեքիմյանը սկզբում խոսեց գրքի բովանդակության, նպատակի, ապա նաեւ հայի կերպարի այն ընկալման մասին, որ ձեւավորվել է արտերկրում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունում:**

**Գրքի հրատարակության գլխավոր հովանավորը «Տաշիր» հիմնադրամն է, հովանավորել են նաեւ «Russian Art Institute»-ը,«Group of Companies Luding» եւ այլ ընկերություններ:**

**Այն հարցին, թե հանդիպման համար ինչու ընտրվեց հատկապես Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտը, Ս. Հեքիմյանը նշեց, որ իր գլխավոր նպատակը ապագա լրագրողների հետ հանդիպումն է եղել: Իսկ Վանաձորում միայն մանկավարժական ինստիտուտն է, որ ունի համապատասխան մասնագիտություն եւ հնարավորություններ:**

**Հեղինակը նաեւ նշեց, որ խմբագրական անձնակազմն ապագայում վավերագրական ֆիլմ ստեղծելու ծրագիր ունի: Ընթացքի մեջ են նաեւ համցանցային կայք ստեղծելու աշխատանքները:**

**Հանդիպումն աչքի ընկավ բուռն քննարկումով:**

**«Յուրաքանչյուր հայ մի Նապոլեոն է, շատ իմիջով ազգ ենք ...»,- հանդիպման ավարտին նշեց Ստեփան Հեքիմյանը:**

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ԵՊՀ լրագրության ֆակ.-ի ուսանողուհի

# «Տաճարական ասպետի գիշերը»

Դերասան, գրող եւ ռեժիսոր Պոլ Սեմպսոնի (Միհնաս Եղսիկյան) երազը իրականություն է դարձել: «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ անցյալ հունվարի 22-ին Փրովիդենսի հայկական եկեղեցու երիտասարդական կազմակերպության նախկին անդամ Պոլը թողարկել է իր նոր ֆիլմը՝ «Night of the Templar» (Տաճարական ասպետի գիշերը) խորագրով, որը նրա ռեժիսորական առաջին աշխատանքն է:

Ֆիլմը միջնադարյան մի ասպետի մասին է, որը 700 տարի անց հարություն է առնում ի կատար ածելու իր երդումը եւ վրեժ լուծելու բոլոր նրանցից, ովքեր դավաճանել էին իրեն: Մի գիշերվա մեջ ինքնությունները բացահայտվում են, ճակատագրերը որոշվում եւ արդարությունը հաստատվում: Ֆիլմը հավատարմության, կրքի, խաբեության եւ վրեժի մասին է: Դրանում միահյուսված են սարսափը, առեղծվածայինը, արկածախնդրությունն ու սեւ հումորը:

Դերասանական կազմում ընդգրկված են Դեյվիդ Քարադայնը (Kill Bill), Ուդո Քիերը (Armageddon), Նորման Ռիդուսը (Walking Dead), Բիլլի Դրագոն (Untouchables) եւ ինքը ռեժիսորը՝ Պոլ Սեմպսոնը:

Մանրամասնությունների համար խորհուրդ է տրվում այցելել www.nightofthetemplar.com կայքը:

Հ. Ծ.

# Նկարիչների միությունում ցուցադրվում են երիտասարդ ստեղծագործողների աշխատանքները

Հայաստանի նկարիչների միությունում մարտի 20-ին բացված երիտասարդ նկարիչների ցուցահանդեսը, որն անցկացվում է «Արվեստ, որը միավորում է մայրցամաքը» նախագծի շրջանակներում շարունակվում է: Այս մասին տեղեկացնում են նկարիչների միությունից:

Ցուցահանդեսում ներկայացված են Սուրեն Սաֆարյանի, Ռաֆայել Մելիքյանի (Մեգալ), Վահագն Գալստյանի, Արփի Վարդանյանի, Արթուր Հովհաննիսյանի, Գարիկ Ենգիբարյանի, Տիգրան Հակոբյանի, Լեւոն Աբրահամյանի ստեղծագործությունները:

Մարտի 20-ին բացման ու ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը, որ կարեւորեց միջոցառումը՝ նշելով որ նմանատիպ միջոցառումները կլինեն շարունակելու, ոգեւորելու համար մեր երիտասարդ նկարիչներին ու նշեց, որ բոլոր մասնակից նկարիչների աշխատանքները հրատարակվելու են առանձին ալբոմի տեսքով:

Այնուհետեւ ելույթ ունեցավ Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը, որ շնորհավորեց ու բարի երթ մաղթեց երիտասարդ նկարիչներին եւ ասաց, որ միշտ էլ ողջունում է նմանատիպ ձեռնարկները:

Վերջում Եվրասիական զարգացման բանկի ներկայացուցիչն ու Կարեն Աղամյանը պատվոգրեր շնորհեցին բոլոր մասնակից նկարիչներին:

Ցուցահանդեսին ներկա էին ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանը, նկարիչներ ու արվեստասեր հասարակություն:

**ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)**
**մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:**



# Արթուր Աբրահամը խոստացել է կրկին հաղթել Շտիգլիցին

*Բուքմեյքերներն էլ նախապատվությունը տալիս են Աբրահամին*



Այսօր Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքում կկայանա 2-րդ միջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամի եւ չեմպիոնական գոտու նախկին տեր Ռոբերտ Շտիգլիցի մենամարտը, որում հայ բռնցքամարտիկը կփորձի 2-րդ անգամ պաշտպանել իր տիտղոսը: Մրցակիցները պրոֆեսիոնալ ռինգում 2-րդ անգամ են հանդիպելու: Նրանց առաջին մենամարտը կայացել էր անցյալ տարվա օգոստոսի 25-ին: Այն ժամանակ Ռոբերտ Շտիգլիցը WBO-ի վարկածով 2-րդ միջինքաշային կարգում աշխարհի չեմպիոնն էր: 12-ռաունդանոց մենամարտում միավորներով (116-112, 115-113, 116-112) հաղթելով Շտիգլիցին, Արթուր Աբրահամը նրանից խլեց չեմպիոնական գոտին:

Աշխարհի չեմպիոնի տիտղոսի 1-ին պաշտպանությունն Արթուրը հաջողությամբ իրականացրեց անցյալ տարվա դեկտեմբերի 15-ին Նյուրնբերգում կայացած մենամարտում՝ տեխնիկական նոկաուտով հաղթելով Մեհդի Բուադլային:

Երկու բռնցքամարտիկներն էլ լրջորեն են նախապատրաստվել առաջիկա մենամարտին եւ վստահ են իրենց ուժերին:

«Իմ առջեւ հատուկ նպատակ չեմ դրել նոկաուտով հաղթելու Շտիգլիցին: Նա լավ բռնցքամարտիկ է, ուստի ամոթ չէ միավորներով հաղթելը: Սակայն խոստանում եմ, որ մեր մենամարտը դիտարժան կլինի, կնմանվի ճակատամարտի, ինչը դիտել սիրում են մարզասերները: Բնականաբար, Շտիգլիցը կձգտի հետ վերադարձնել իրենից խլված չեմպիոնական գոտին: Ես դա լավ եմ հասկանում, ուստի կրկնակի եռանդով եմ նախապատրաստվել մենամարտին: Ծանոթ եմ մրցակցիս ուժեղ եւ թույլ կողմերին: Շտիգլիցին ոչ մի հնարավորություն չեմ տա հաղթելու: Ես կկոտրեմ Շտիգլիցին: Դրանում կասկած չունեմ: Հարգում եմ բոլոր մրցակիցներիս, այդ թվում Շտիգլիցին, սակայն մշտապես ռինգ եմ դուրս գալիս միայն հաղթանակի համար», հայտարարել է **Արթուր Աբրահամը**:

**Ռոբերտ Շտիգլիցն** Արթուր Աբրահամի հետ 2-րդ մենամարտում ռինգ դուրս կգա ավելի կոշտ ձեռնոցներով. «Նախորդ մենամարտում վնասվածքի պատճառով ավելի փափուկ ձեռնոցներ էի հագել, ինչը որոշ առավելություն էր ընձեռել Արթուր Աբրահամին: Նա ասել է, թե կոչնչացնի ինձ: Դրանք պարզապես բարձրագոչ խոսքեր են: Մեր առաջին մենամարտում մի շարք սխալներ թույլ տվեցի, որոնք պետք է ուղղեմ: Չեմ ցանկանում վերհիշել անցյալը: Միայն կարող եմ ասել, որ ինձ պատկանող չեմպիոնական գոտին հայտնվել է ուրիշի մոտ: Առաջիկա մենամարտում կխլեմ տիտղոսն Աբրահամից: Ինձ համար դա ամենագլխավորն է, որի վրա կենտրոնացել եմ»:

Արթուր Աբրահամի մարզիչ **Ուլի Վեգներն** էլ վստահ է իր սանի հաջողությունում. «Մենք չենք գերագնահատում մեր ուժերը, սակայն նաեւ չենք թերագնահատում Ռոբերտ Շտիգլիցին: Արթուրը մի շարք գործոններով առաջադիմել է, ուստի կարծում եմ, որ նա կհաղթի: Խոնարհվում եմ Շտիգլիցի պրոֆեսիոնալիզմի առջեւ: Նրա մարզիչը հավանաբար հատուկ մարտավարություն է մշակել: Սակայն մենք նրան կհիասթափեցնենք»:

Շտիգլիցի մարզիչ **Դիրկ Զեմկին** էլ հետեւյալ կարծիքի է. «Մրցակիցների միջեւ նախորդ մենամարտում Աբրահամն առաջին 3 ռաունդներից հետո իրեն ռինգի տեր էր զգում: Այժմ պետք է աշխատենք, որ այդ սցենարը չկրկնվի: Ռոբերտը կարող է ավելի լավ մենամարտել, քան նախորդ անգամ: Մեծ անհամբերությամբ եմ սպասում առաջիկա մենամարտին»:

Բուքմեյքերական ընկերություններն էլ այսօրվա մենամարտում նախապատվությունը տալիս են Արթուրին: Նրա հաղթանակի գործակիցը 1,19 է, իսկ Շտիգլիցինը՝ 4,15: Ոչ-ոքին գնահատվում է 27 գործակցով:

# Արոնյանի կարծիքով հիմնական պայքարը դեռ առջեւում է

Լոնդոնում ընթացող շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարում պայքարի լարվածությունը գնալով աճում է: Դա է վկայում այն, որ վերջին 2 տուրերում մրցախաղերի մեծամասնությունն ավարտվում է միայն 6-ժամյա պայքարից հետո: Բացառություն չկազմեց նաեւ Լեւոն Արոնյանի եւ Թեյմուր Ռաջաբովի պարտիան, որն ավարտվեց Երեւանի ժամանակով ժամը 00:15-ին: Եվ եթե Ռաջաբովը կոպիտ սխալ թույլ չտար, ապա պարտիան ավելի երկար կտեւեր: Լեւոն Արոնյանը հիանալի օգտագործեց մրցակցի վրիպումն ու կարեւոր հաղթանակ տոնեց սկզբունքային մրցավեճում, 4,5 միավորով Կառլսենի հետ շարունակեց գլխավորել աղյուսակը:





Մրցախաղից հետո կայացած մամուլի ասուլիսում **Լեւոն Արոնյանը** հետեւյալ կարծիքն է հայտնել. «Մինչեւ վերջին պահը Թեյմուր Ռաջաբովը հրաշալի էր պաշտպանվում: Միայն հաջողությունն օգնեց ինձ շահելու այդ պարտիան: Ես շատ ժամանակ ունեի մտածելու համար, մինչդեռ մրցակիցը կարող էր հայտնվել ցայտնոտում:

Առայժմ վաղ է խոսել մրցաշարում ունեցած առավելության մասին ու նայել աղյուսակին: Շատ բան դեռեւս կարող է փոխվել: Հանգստանում եմ նաեւ երաժշտություն լսելով»:

Լոնդոնում գերազանց ելույթների շնորհիվ Լեւոն Արոնյանն իր անհատական վարկանիշն ավելացրել է 12,5-ով եւ հասցրել է 2821,5-ի: 6,6-ով վարկանիշն ավելացրել է դասակարգման ցուցակի առաջատար Մագնուս Կառլսենը: Ներկայումս նրա ռեկորդային վարկանիշը 2878,6 է:

# «Նապոլին» հրավիրում է Լուչանո Սպալետիին

Չի բացառվում, որ «Զենիթի» գլխավոր մարզիչ Լուչանո Սպալետին գլխավորի իտալական «Նապոլին»: Իտալացի մասնագետի ծառայություններով հետաքրքրված է ակումբի նախագահ Աուրելիո Դե Լաուրենտիսը: 54-ամյա Սպալետին կփոխարինի Վալտեր Մացարիին, որը պատրաստվում է գլխավորել «Ինտերը»:

Բացի Սպալետիից, «Նապոլիի» գլխավոր մարզչի պաշտոնի հավակնորդների թվում են նաեւ «Բոլոնիայի» մարզիչ Ստեֆանո Պիոլին եւ «Կատանիայի» գլխավոր մարզիչ Ռոլանդո Մարանը:

ԸՄԲՇԱՄԱՐՏ

# Մուսա Մուրթազալիեւը հռչակվեց Եվրոպայի փոխչեմպիոն



Թբիլիսիում ընթացող ըմբշամարտի Եվրոպայի առաջնությունում երեկ իրենց մրցավեճն ավարտեցին ազատ ոճի ըմբիշները: Մրցումների վերջին օրը հաջող էր Հայաստանը ներկայացրած 84 կգ քաշային ըմբիշ Մուսա Մուրթազալիեւի համար, որը մեր հավաքականին 2-րդ մեդալը պարգեւեց՝ նվաճելով Եվրոպայի փոխչեմպիոնի տիտղոսը: Հիշեցնենք, որ Հայաստանին առաջին մեդալը պարգեւել էր Դավիթ Սաֆարյանը, որը մինչեւ 66 կգ քաշային կարգում Եվրոպայի չեմպիոն էր հռչակվել՝ եզրափակիչում պարտության մատնելով թուրք ըմբիշին:

Մուրթազալիեւը մրցումները սկսեց 1/8 եզրափակիչից, որտեղ նրա մրցակիցը սլովակ Միխայել Բոդնարն էր: Մեր ըմբիշը շատ վստահ անցկացրեց գոտեմարտն ու մեծ առավելությամբ հաղթեց մրցակցին: Քառորդ եզրափակիչում Մուրթազալիեւը պարտության մատնեց ուկրաինացի Իբրահիմ Ալդատովին: Դաղստանցի ըմբիշը հաջողությամբ հաղթահարեց նաեւ կիսաեզրափակիչի արգելքը, որտեղ նրա մրցակիցը մոլդովացի Պյոտր Յանուլովն էր:

Վճռորոշ գոտեմարտում Մուրթազալիեւը ուժերը չափեց վրացի Դաթո Մարսագիշվիլու հետ: Ցավոք մեր ըմբիշին չհաջողվեց հաղթել նաեւ եզրափակիչում՝ բավարարվելով արծաթե մեդալով, ինչը եւս մեծ հաջողություն է:

# Դանիելյանն ու Մկրտչյանը միջին դիրքերում են

Հնդկաստանում ընթացող շախմատի շրջանաձեւ մրցաշարում Հայաստանը ներկայացնում են գրոսմայստերներ Լիլիթ Մկրտչյանն ու Էլինա Դանիելյանը: 6 տուրից հետո Լիլիթը 12 մասնակիցների մեջ վաստակած 3,5 միավորով ընթանում է 4-րդ տեղում, իսկ Էլինան 3 միավորով 6-րդն է: Առաջատարը ռուսաստանցի Օլգա Գիրյան է, որն ունի 5 միավոր: 4-ական միավորով նրան հետապնդում են ռումինացի Քրիստինա Ֆոյսորն ու հնդիկ Ռութ Պադմինին:

Լիլիթ Մկրտչյանը մրցաշարը սկսեց Էլինա Դանիելյանի եւ Ռութ Ռադմինիի հետ ոչ-ոքիներով, ապա հաղթեց Քի Գուոյին: 4-րդ տուրում հայ շախմատիստուհին պարտվեց Օլգա Գիրյային, որից հետո ոչ-ոքի խաղաց Մարի Գոմեսի հետ: Միայն 6-րդ տուրում Լիլիթին հաջողվեց առաջին հաղթանակը տոնել Նիշա Մոհոտայի հետ պարտիայում:

Էլինա Դանիելյանն էլ հաշտություն կնքելով Մկրտչյանի եւ Էշա Կարավադեի հետ ու հաղթելով Մանիշա Կիրանին, 4-րդ տուրում անհաջող խաղաց՝ պարտվելով Գիաթե Սվաթիին: Հաջորդ 2 տուրերում Դանիելյանը հաշտություն կնքեց Էլիզաբեթ Պյոտչի եւ Քրիստինա Ֆոյսորի հետ:

# Նալբանդյանը պարտվեց առաջին փուլում

Դավիթ Նալբանդյանն անհաջող հանդես եկավ Մայամիում մեկնարկած թենիսի մրցաշարում՝ պայքարից դուրս մնալով առաջին փուլում: Նա պարտվեց ֆինն Յարկո Նիեմինենին (6-2, 4-6, 3-6):

# 3 ֆուտբոլիստ միացել է ազգային հավաքականին

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը խոստացել էր, որ երիտասարդական հավաքականի մի քանի ֆուտբոլիստների կիրավիրի ուսումնամարզական հավաքի: Եվ ահա երիտասարդական հավաքականի հետ հանդիպումից հետո ազգային հավաքական են հրավիրվել առավել աչքի ընկած 3 ֆուտբոլիստները՝ Աղվան Պապիկյանը, Տարոն Ոսկանյանն ու Դավիթ Հակոբյանը:

# Յուրօրինակ ժամացույցներ

Audemars Piguet ընկերությունը «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսիի հետ համագործակցությամբ թողարկել է 100 ժամացույց, որոնց վաճառքից ստացված ողջ գումարը կհատկացվի Մեքսիկայի, Արգենտինայի եւ Իսպանիայի աղքատ ընտանիքների երեխաներին:

Գնորդը ժամացույցի հետ կստանա նաեւ Արգենտինայի հավաքականում Մեսիի 10 համարի մարզաշապիկը, ինչպես նաեւ հնարավորություն կունենա Բարսելոնում հանդիպելու ֆուտբոլիստի հետ:

# Խաբի Ալոնսոն չի երկարաձգի պայմանագիրը

Մադրիդի «Ռեալի» կիսապաշտպան Խաբի Ալոնսոն մերժել է գործող պայմանագիրը եւս 2 տարով երկարաձգելու ակումբի ղեկավարության առաջարկը: Չնայած դրան, «Ռեալը» մտադիր չէ ֆուտբոլիստին տրանսֆերի հանել: Ալոնսոն «Ռեալում» հանդես կգա մինչեւ պայմանագրի ժամկետի ավարտը՝ 2014-ի հունիս, որից հետո թիմից կհեռանա ազատ ֆուտբոլիստի կարգավիճակով:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանցի հնարավորությունները՝ ի նպաստ գյուղատնտեսության




Արմավիրի մարզի այժմ արդեն 12 գյուղում հնարավոր է կանխել կարկուտի պատճառած բերքի կորուստը:

2008-2012 թթ. ՎիվաՍել-ՄՏՍ-ն հատկացրել է 180 մլն դրամ՝ Արմավիրի մարզում 28 «Զենիթ» հակակարկտային կայաններ տեղադրելու համար:

Կլիմայական պայմանները ոչ միշտ են նպաստավոր Հայաստանի գյուղատնտեսների համար: Ամեն տարի երկրի գյուղատնտեսությունը բերքի զգալի կորուստ է կրում անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով: Կարկուտի հասցրած վնասը կազմում է բնական աղետների պատճառած վնասի մոտ 50 տոկոսը: Կարկտի տեքով տեղումները հաճախ հանգեցնում են առավել մեծածավալ, իսկ որոշ դեպքերում՝ նաեւ բերքի լրիվ կորստի: Այս ամենին գումարվում է նաեւ վերջին տասնամյակներում արձանագրվող կլիմայական փոփոխությունը, որը հանգեցրել է կարկտային տեղումների սաստկացմանը:

Մշակված հողատարածքները կարկուտից պաշտպանելու ամենաարդյունավետ տարբերակը հակակարկտային կայանների տեղադրումն է: 2012թ.-ի ընթացքում ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ ութ միավոր «Զենիթ» հակակարկտային կայան է արտադրվել եւ տեղադրվել Արմավիրի Քարակերտ, Լեռնագոգ, Շենիկ, Նոր Արտամետ եւ Արգինա գյուղերում: ՎիվաՍել-ՄՏՍ-ն նույն մարզին եւս 15 մլն դրամ է հատկացրել՝ 3 նոր հակակարկտային կայանի տեղադրման համար: Այս անգամ դրանք տեղադրվել են Արեւադաշտ եւ Արաքս գյուղերում: Ընդհանուր առմամբ՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի ներդրումների ծավալը 2008-ին կազմել է 36 մլն դրամ, իսկ 2009 եւ 2010 թթ.-ին, համապատասխանաբար՝ 40 եւ 44 մլն դրամ: Այս գյուղերի ագարակատերերին քաջ հայտնի է, թե ինչ ծավալի նյութական վնաս կարող է հասցնել կարկուտը:

Հակակարկտային ամբողջ համակարգը ներառում է հատուկ սարքավորումներ, որոնք հայտնաբերում են պոտենցիալ կարկուտ կրող ամպերի կուտակումը, համակարգում են հակակարկտային հրթիռների գործարկումը, ապահովում ավտոմատ սարքավորումների գործարկումը եւ այլն: «Զենիթ» հակակարկտային կայաններն աշխատում են մեծ ուժգնությամբ ուղղահայաց հարվածային ալիքները դեպի մթնոլորտ տարածելու եղանակով: Այդ ալիքները վնասում են կարկտաբեր ամպերի կառուցվածքը եւ չեզոքացնում կարկուտի հավանականությունը:

Հակակարկտային կայանի կառավարումն իրականացվում է ավտոմատ կերպով՝ բջջային ցանցի միջոցով բջջային հեռախոսից SMS հաղորդագրություններ ուղարկելով: Վերջինիս տեխնիկական ապահովումն իրականացվում է ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության կապի միջոցներով: Ի դեպ, հեռահաղորդակցության առաջատար օպերատորը հակակարկտային կայանների համար սահմանել է կապի հատուկ սակագին: Կայանի ավտոմատ աշխատանքն ապահովելու համար օգտագործվում է արեւային էլեկտրասնուցման համակարգ: Կայանները շատ պարզ եւ հեշտ են՝ կիրառման մեջ: Չորրորդ տարին անընդմեջ, ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանցն արդյունավետ կերպով օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով: Նախկինում հակակարկտային համակարգերը վերահսկվում էին կապի անլար ռադիո մոդեմի միջոցով, ինչն այնքան էլ անարդյունավետ չէր:

«Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության առաջնային, եւ, միեւնույն ժամանակ, ամենախոցելի ոլորտներից է: Ցավոք, զգալի ժամանակ եւ ներդրումներ պահանջող բերքը կարող է բնական աղետի հետեւանքով ոչնչացվել ընդամենը մի քանի րոպեում: Սա մեծ կորուստ է գյուղացիների համար: Մենք, սակայն, պետք է գիտակցենք, որ այս խնդիրը վերաբերում է յուրաքանչյուրիս, քանի որ բերքի ոչնչացումը մեծ կորուստ է ոչ միայն երկրի տնտեսության, այլեւ գյուղերի, քաղաքի եւ առհասարակ՝յուրաքանչյուր ընտանիքի համար: ՎիվաՍել-ՄՏՍ-ի իրականացրած այսօրինակ ծրագրերը խոսում են գոյություն ունեցող խնդրին մեր ընկերության համակարգված մոտեցման մասին: ՎիվաՍել-ՄՏՍ-ն նպաստում է Հայաստանում կյանքի առավել լավ որակի ապահովմանը», - արձանագրել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Ընդհանուր առմամբ, 2008-2012 թվականներին ՎիվաՍել-ՄՏՍ-ն 180 մլնդրամ է տրամադրել 28 հակակարկտային կայանի կառուցման եւ տեղադրման համար: Գյուղական համայնքներում զգալի այս ներդրումն իրականացնելով, ՎիվաՍել-ՄՏՍ- ցանկանում է նվազագույնի հասցնել բերքի կորուստը եւ օգնել գյուղական համայնքների բնակիչներին՝ կայուն եկամուտ ստանալու հարցում: Դա անհրաժեշտ է նաեւ ապագայում կայուն զարգացում գրանցելու համար:

«Զենիթ» հակակարկտային կայանները մշակվել եւ արտադրվել են «Բարվա» ինովացիոն կենտրոնի կողմից՝ մտավոր եւ արդյունաբերական տեղական ռեսուրսների կիրառմամբ:

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն իրականացնում է ցանցի ընդլայնման, զարգացման եւ վերազինման մեծածավալ աշխատանքներ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն տեղեկացնում է, որ Շիրակի մարզում իրականացվում են ընկերության բջջային ցանցի ընդլայնման, զարգացման եւ վերազինման մեծածավալ աշխատանքներ՝ թողունակությունը մեծացնելու եւ հնարավորություններն ընդլայնելու նպատակով: Նորարարությունների առաջատար ՎիվաՍել-ՄՏՍ-ի նախաձեռնած աշխատանքները նպատակ ունեն բավարարել տեխնոլոգիաների նկատմամբ՝ շուկայի ակնկալիքներն ու աճող պահանջարկը:

Ցանցի կատարելագործման աշխատանքներով պայմանավորված՝ս.թ. մարտի 23-ից մինչեւ ապրիլի կեսը հնարավոր են որոշ անհարմարություններ՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից տրամադրվող ծառայություններից օգտվելու ժամանակ:

Բաժանորդներին անհարմարություններից հնարավորինս զերծ պահելու նպատակով ցանցի կատարելագործման աշխատանքները կիրականացվեն կեսգիշերից հետո:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն հավաստիացնում է, որ վերը նշված բոլոր աշխատանքներն կիրականացվեն հնարավորինս արագ: Ընկերությունը հայցում է իր բաժանորդների ներողամտությունը՝ հնարավոր անհարմարությունների համար:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկող անձնակազմը մշտապես կլինի բաժանորդների տրամադրության տակ՝ անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Վերը նշված աշխատանքները կիրականացվեն Գյումրիում, ինչպես նաեւ Շիրակի մարզի գյուղերում եւ բնակեցված այլ տարածքներում:



# Նոր նշանակում

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Սիփան աբեղա Գեւորգյանն ազատվել է Մայր աթոռի դիվանատան եկեղեցական-ժողովական կառույցների գրասենյակի տնօրենի պարտականություններից եւ հոգեւոր ծառայության կոչվել Չիլիի հայոց համայնքում:

# Կարգալույծ է հռչակվել Զոհրապ քահանա Մազմանյանը

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել վիրահայոց թեմի հոգեւոր սպասավոր Զոհրապ քահանա Մազմանյանը՝ հովվական իր ծառայության վայրը լքելու համար:

Կարգալույծ եկեղեցականը կդասվի աշխարհականների շարքը՝ Էդգար Մազմանյան՝ ավազանի անունով:

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է*
*Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի*
*«31» հունվարի 2013թ. արձանագրությամբ*

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**«Արաբկիր համայնքի բարեգործական հիմնադրամի 2012թ-ի գործունեության մասին»**

1. **Հիմնադրամի լրիվ անվանումը**՝ Արաբկիր համայնքի բարեգործական հիմնադրամ
**Գրանցման համարը**՝ պետական գրանցման վկայական՝ 03 Ա 060686
**Գրանցման ամսաթիվը**՝ 09.06.2003թ.
**Գտնվելու վայրը**՝ Ն.Զարյան 27
**Հեռախոս**՝ 23-13-37
**Բջջային**՝ 098-494-849
**Կայք**՝ չի ունեցել պաշտոնական կայք
**Էլ.փոստ**՝ Hovhannisyan.fin@.gmail.com
2. **Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը**՝ Սուսաննա Սարգսյան - աշխատավարձի ձևով
3. **Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները**՝ Դ.Գյուլումյան, Գ.Կարապետյան, Ա.Մխիթարյան, Մ.Գալստյան - չեն օգտվել հիմնադրամի միջոցներից
4. **Աշխատակազմը**՝ Գոհար Հովհաննիսյան - աշխատավարձի ձևով, Ելենա Հովհաննիսյան - աշխատավարձի ձևով
5. **Իրականացված ծրագրերը**՝ «ֆինանսական օգնություն սոցիալապես անապահով խավին» - 12940760 դրամ, «օժանդակություն վարչական շրջանի փողոցների, բակերի, կամարանցումների բարեկարգման աշխատանքներին» - 40172795 դրամ, «օժանդակություն երեխաների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքներին»-1099950 դրամ, «օժանդակություն մշակութային, սոցիալական միջոցառումների իրականացմանը»-1723500 դրամ:
6. **Ֆինանսական աղբյուրները**՝ անհատ բարերարներ 245 մարդ - 6783000 դրամ, Երևանի քաղաքապետարան – 5000000 դրամ, Արաբկիր վարչական շրջան-23000000 դրամ, «Արաբկիր Սերվիս» ՓԲԸ - 7705000 դրամ, «Առէկսիմբանկգազպրոմբանկ խումբ»-500000 դրամ, «Հասա Գրուպ» ՍՊԸ-500000դրամ, «Սիմառ» ՍՊԸ - 400000 դրամ, «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-1000000 դրամ, այլ կազմակերպություններ -174414 դրամ, փոխառություն 16000000 դրամ:
7. **Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը**՝ 67890276 ՀՀ դրամ
7.1 **Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը**՝ 60890276 ՀՀ դրամ
8. **Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի** (անվանումը)՝ «Աուդիտ-Սերվիս» ՍՊԸ
9. Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը 1 (մեկ) թերթից

*գործադիր տնօրեն՝* **Ս.Սարգսյան**

*հաշվապահ՝* *Գ.Հովհաննիսյան*

*Աուդիտ Սերվիս*
*Աուդիտորական խորհրդատվական ընկերություն*
*Աուդիտորական գործունեության լիցենզիա թիվ 006*
*ՀՀ, ք. Երեւան, Հանրապետության 78, բն. 26, հեռ./ֆաքս՝ 544-788*
*Էլ. հասցե՝ info@auditservice.am, http://www.auditservice.am*

**Անկախ աուդիտորական եզրակացություն**
**«Արաբկիր համայնքի բարեգործական» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին**

**Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**

Մեր կողմից իրականացվել է «Արաբկիր համայնքի բարեգործական» հիմնադրամի կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը եւ այլ ծանոթագրություններ:

**Հիմնադրամի ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումներից:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները եւ պլանավորել ու անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե հիմնադրամի ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ հիմնադրամի ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Արաբկիր համայնքի բարեգործական» հիմնադրամի ֆինանսական վիճակը, եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները եւ դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

22 մարտի, 2013 թ.

*«Աուդիտ Սերվիս» ՍՊԸ տնօրեն՝*
*Որակավորված Աուդիտոր*
*ԳՈՌ ԴԱՎԹՅԱՆ*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԱՔԴ/1722/02/12 քաղաքացիական գործն ըստ դիմումի Լիլիթ Ամիրխանյանի՝ Մովսես Ղուկասի Սիրունյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին:

Խնդրվում է բոլոր քաղաքացիներին եւ կազմակերպություններին Մովսես Ղուկասի Սիրունյանի (ծնված 06.08.1976 թ., վերջին հայտնի բնակության հասցեն ք. Երեւան, Կիեւյան փողոցի 1ա շենքի թիվ 31 բնակարան) վերաբերյալ վերջին մեկ տարվա ընթացքում տեղեկություններ ունենալու դեպքում մեկամսյա ժամկետում հաղորդել Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին (հասցե՝ ք. Երեւան, Հր. Ներսիսյան 10, հեռ. 010-24-19-62):

**Դատավոր** **Ռ. Մ. Բունիաթյան**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության 22.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: